Azg Վազ

Դեկտեմբեր 11 Շաբաթ 1993

ՈՒՍԿՎԱՐ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԱԹԵՐԹ
Գ տարի, թիվ 238 (489)
գինը 25 ռ.
դասիչ 69149

Երևան 375010
Հանրապետության 47

հեռ. 581841, ֆաքս 562941
տելեքս 243266 CPIRI SU

Լուսանկար

Առեւտրի ազատություն Մեծ Բրիտանիայում: Նրանց հոգսը՝ մեզ

Մեծ Բրիտանիայում այժմ հնարավոր է գնումներ կատարել նաեւ կիրակի օրը: Այդ որոշումն ընդունել է Բրիտանիայի ստորին պալատը: Դրանով խանութպաններն իրավունք են ստանում իրենց խանութները բացել երբ որ ցանկանում են: Համընդհանուր ազատության մեջ բացառություն են կազմում սուպերմարկետներն ու մեծ խանութների շղթաները, որոնք իրավունք չունեն օրական 6 ժամից ավել աշխատել: Այս որոշումը վերջապես ավարտում է տարիներ ի վեր շարունակվող բանավեճը խանութներ բացելու ժամի մասին: Ստացվեց այնպես, որ վեճը տանող տվեցին արհմիությունները եւ եկեղեցին: Այնպես որ, կիրակի օրը եկեղեցի գնալու կամ կրիկետ խաղալու վոխարեն շատերը կշատեն խանութ: ■

Գյուղատնտեսություն

Ադրբեջանը պատրաստ չէ փոխզիջման

«Բաքուն դեռեւս պատրաստ չէ գտնել խնդրի կարգավորման փոխզիջումային տարբերակ», երեկ լրագրողներին հայտարարեց ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Արամ Սրբահամյանը: Ադրբեջանի բոլոր դիվանագիտական ջանքերը թե՛ Վիեննայում, թե՛ Բրյուսելում, ըստ էության, ուղղված էին միայն մի փաստաթուղթ ընդունելուն, որում Հայաստանը դատապարտվի որպես ագրեսոր:

Մինչդեռ Հայաստանն ավելի լուրջ ու գործնական մոտեցման կողմնակից է: «Մենք գտնում ենք, որ բոլոր պատերազմական եւ ոչ պատերազմական հանդիպումների ժամանակ Ղարաբաղը եւ Ադրբեջանը շահագրգռված կողմերի մասնակցությամբ կամ առանց դրանց պետք է ենթարկեն կրակի դադարեցման եւ ռազմական գործողությունները չվերսկսելու կոնկրետ միջոցառումներ եւ մեխանիզմներ», նշեց մամուլի քարտուղարը:

Նման հանդիպումները չպետք է դառնան անհիմն մեղադրանքների եւ քարոզչական մրցավազքի ատաղձագործ: Իսկ Ադրբեջանի քայլերը ցույց են տալիս, որ նա մտադիր չէ ձեռք քաշել դրանից, մասնավորապես, նրա շարունակական մեղադրանքներն այն կատարելությամբ, թե Հայաստանը խոչընդոտում է ԵԱՀԽ խաղաղարար ջանքերին: Չնայած որ Հայաստանն ու ԼՂՀ-ն ընդունեցին Մինսկի խմբի ժամանակացույցը, իսկ Ադրբեջանը մերժեց այն: Այս ամենին զուգահեռ, Ադրբեջանը շարունակում է ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղի դեմ: Այդ նպատակով նա ձեռք է բերում ռազմական տեխնիկա եւ վարձկաններ:

Մասնավորապես մոջահեդների մասնակցությամբ Ադրբեջանը փորձում է դարաբաղյան խնդրին կրոնական երանգ տալ: Հայաստանը դեմ է նման մոտեցմանը եւ ժխտում է այն: «Կոնֆլիկտը զուտ քաղաքական է. այն չունի ո՛չ կրոնական, ո՛չ էլ ազգային բովանդակություն, հայտարարեց Արամ Արբահամյանը: Խնդիրն այլ հարթություն տեղափոխելը, ըստ երեւույթին, ձեռնտու է Ադրբեջանի որոշ շրջանակների, որոնք փորձում են նոր ուժեր ներքաշել հակամարտության մեջ»:

Ղարաբաղյան խնդիրն իր այսօրվա վիճակով կախված է ոչ միայն հակամարտող կողմերի՝ Ադրբեջանի եւ ԼՂՀ-ն ցանկություններից: Այսինքն, մեջտեղ է գալիս միջազգային հանրության մասնակցության հարցը: Միջազգային ասպարեզներում դարաբաղյան խնդրի կարգավորման շուրջ առկա տարաձայնությունները, խաղաղության տարբեր ծրագրերի առկայությունը ցույց են տալիս, որ այսօր հասունացել է մեկ, միասնական ծրագրի անհրաժեշտությունը, ծրագիր, որ «կրխի ՄԱԿ-ի բանաձեւերի պահանջներից եւ կիսմնվի Ղարաբաղի եւ Ադրբեջանի [illegible] իրական փոխզիջման վրա»:

«Հայաստանը փորձում է հարթել նշված տարաձայնությունները, նպաստել ԵԱՀԽ եւ Ռուսաստանի միջնորդական ջանքերի ներդաշնակմանը», հայտնեց ՀՀ նախագահի մամուլի քարտուղարը: Նաեւ այդ հարցերն էին քննարկվում Մոսկվայում, ՀՀ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով դեսպան

Տես էջ 2

Քննություն

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ

«Ազգը» բավականին հաճախ է անդրադարձել Հայաստանի ազգային փոքրամասնություններին, նրանց բազմաթիվ խնդիրներին ու հուզող հարցերին, փորձել իր հրապարակումների միջոցով նպաստել ազգային փոքրամասնությունների նկատմամբ իշխանությունների եւ ընդհանրապես հասարակության բարյացակամ վերաբերմունքին: Եւ դա միանգամայն բնական է՝ այդ է պահանջում ոչ միայն մեծ տիպուսի ունեցող եւ ամենուրեք օտար պետությունների հովանավորությունը վայելող ժողովրդի բարոյականությունը, այլեւ հիրավի ժողովրդավարական պետություն կառուցելու հրամայականը:

Եւ ահա երեկ ՀՌԱԿ Հանրապետական վարչության գրասենյակում տեղի ունեցավ կուսակցության ղեկավարների հանդիպումը հանրապետության ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպման առիթը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից Մարդու իրավունքների հաչակագրի ընդունման 45-ամյակն է, որը լրացավ դեկտեմբերի 10-ին: Հանդիպմանը ներկա էին Հայաստանի քարտ մտավորականության, հայ հունական ասոցիացիայի, Հայաստանի ասորական համայնքի, հրեական համայնքի, ուկրաինական «Չերվոնա Կալինա» մշակութային ընկերության, ռուսական «Օդա» եւ «Ռոսիա» միությունների եւ այլ ներկայացուցիչներ:

Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները իրենց ելույթներում խոսեցին ընդհանրապես նման հանդիպումների կարեւորության եւ Հայաստանում իրենց նկատմամբ ցուցաբերվող լավ վերաբերմունքի մասին միաժամանակ ներկայացնելով համայնքների առջեւ ծառացած խնդիրները: Այսպես, Հայաստանի քարտ մտավորականության խորհրդի նախագահ Ամատիկ Սարդարը շեշտեց, որ հանրապետության իշխանությունները որպես ուշադրություն չեն դարձնում քաղաքական մշակույթին, եւ փաստորեն միակ բերը «Ռայա Թարգան» տպագրվում է շաբաթը մեկ անգամ: Հիմնականում հանգանակությունների հաշվին: Բացի այդ, ըստ նրա, անհրաժեշտ է, որ Հայաստանի քաղաքական համայնքն իր ներկայացուցիչն ունենա խորհրդարանում: Քարդ մտավորականության ներկայացուցիչները խոսեցին նաեւ Թորքիայում եւ Իրանում քարդ ժողովրդի վարած պայքարի մասին եւ Հայաստանի համայնքներին կոչ արեցին դատապարտել քարդ ժողովրդի դեմ ձեռնարկվող անմարդկային արարքներ:

Հայ հունական ասոցիացիայի ներկայացուցիչները խոսեցին իրենց գործունեության մասին շեշտելով Հայաստանի եւ Հունաստանի միջեւ հարաբերությունների ամրապնդման եւ այն կոնկրետ բնագավառների վրա, որտեղ ՀՌԱԿ-ը կարող է որոշակի նպաստ ցուցաբերել ասոցիացիայի աշխատանքներին: «Օդա»-ի փոխնախագահ Յուրի Զելինսկին հույս հայտնեց, որ առաջիկայում Հայաստանի ազգային փոքրամասնությունները կհամագործակցեն, որովհետեւ առանձին-առանձին միշտ չէ, որ այս կամ այն հարցը լուծելիս հաջողության են հասնում: Ավելի կտրուկ էր «Ռոսիա» միության ներկայացուցիչ Գալինա Չեռնոսովայի ելույթը, որը նախ հայտարարեց, թե Հայաստանում ռուսների իրավունքները ոտնահարվում են (նկատի ուներ ամենից առաջ ռուսական դպրոցների փակումը, իսկ առկա ռուսական դասարաններում դասագրքերի եւ ծրագրերի բացակայությունը), այդպես կոնկրետ փաստեր բերեց, թե որոշ շրջաններում ազգային խտությունը կա՝ ռուսներին հող չեն տալիս եւ այլն: Ուկրաինական «Չերվոնա Կալինա» մշակութային ընկերության նախագահ Օլգա Պարխոմենկոն ընդհանրապես, տեղեկացրեց, թե իրենց առաջարկել են բացել ուկրաինական դպրոց, եւ եթե նման անհրաժեշտություն լինի, որեւէ խոչընդոտ բացառվում է: Իսկապես, ուկրաինացիներն նույնպես այնքան էլ գոհ չէր իշխանության որոշ մարմինների վերաբերմունքից, որը գանկության դեղում կարելի է դիտել որպես ազգային փոքրամասնությունների իրավունքների ոտնահարման փաստ (ըստ նրա, դասական մարմիններ մի ուկրաինուհու նկատմամբ բացահայտորեն անարդարացի էին վարվել), սակայն ՀՌԱԿ Հանրապետական վարչության ատենադպիր Ռուբեն Միրզախանյանը խոստացավ, որ անհրաժեշտության դեպքում կուսակցությունն իր կարողություններն ի սպաս կդնի այդ մի ջղաձիգը հարթելու նպատակով:

Հրեական համայնքի ներկայացուցիչ Էդել Շվարցման-Առամելյանը հայտարարեց միայն, որ Հայաստանի հրեաներն աղքատիվված են բնակարանով, աշխատանքով եւ այլն, եւ որեւէ բարոյական չունեն: Տես էջ 2

Լեռնային

Թեժ ռազմական գործողություններ Աֆղանստանում

Աֆղանստանի նախագահ Բուրհանուդին Ռաբանիին ենթակվող ռազմաօդային ուժերը հարձակում են գործել երկրի վարչապետ Հեքմաթիարի վերահսկողության տակ գտնվող տարածքների վրա: Երեքշաբթի օրը Ռաբանիի զինված ստորաբաժանումները հայտարարեցին, որ իրենք արգելափակել են բոլոր հիմնական ավտոմայրուղիները, որոնցով մատակարարվում էին վարչապետի հավատարիմ ջոկատները: Նրանց կարծիքով, այս միջոցառման հետեւանքով ոչ միայն կկրճատվի Հեքմաթիարի զինյալների մատակարարումը, այլեւ կարող է էական բեկում մտնել Աֆղանստանի քաղաքացիական պատերազմի ընթացքում: ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ ՏԱՍՍ

Գերմանիայից ռուսական զորքերի դուրսբերումը

Չնայած ընթացիկ տարվա ընթացքում մոտ 75 հազար ռուսական զինծառայող է դուրս բերվել Բրանդենբուրգ ֆեդերալ տարածքից, սակայն մյուս շրջանների թվում այն մնում է նախկին ԽՍՀՄ զինծառայողներով ամենահագեցվածը: Բրանդենբուրգում այժմ կա զորքերի արեւմտյան խմբավորման 42 հազար զինծառայող: Այս տվյալները հայտնեց հողային իշխանության կոմերսիայի հարցերով լիազոր Հելմուտ Լոմկեն: Նա նշեց, որ մինչեւ տարվա վերջ տարածքում կմնան 34 զինվորական կայազոր: Ռուսական զորքերի դուրսբերման հիմնական խնդիր է համարվում նրանց համար բնակմակերեսի պակասը: ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ ՏԱՍՍ

Սոմալիի գործողությունների տարեդարձը

Միավորված ազգերի կազմակերպությունը նշեց Սոմալիում ռազմական գործողություններ սկսելու տարեդարձը: Այս առիթով ՄԱԿ-ի ընդունած հայտարարության մեջ նշվում է, որ անցյալ տարի այս աֆրիկյան երկրում առաջացած հումանիտար ճգնաժամը դարձավ է դարձել տասնյակ հազարավոր սոմալիցիների մահվան: Այժմ, մեկ տարի անց, երկրում առաջացել է նոր հիմնախնդիր, նույնքան բարդ եւ ճգնաժամային՝ քաղաքական հաշտեցման հարցը, որպեսզի Սոմալիի վերականգնումը հնարավոր լինի շարունակել: ԱՐՄԵՆՊՐԵՍ ԻՏԱՌ ՏԱՍՍ

Հաջորդ տարի Քլինթոն-Ասադ հանդիպում

Հաջորդ տարվա սկզբին, ԱՄՆ-ի նախագահ Բիլ Քլինթոնը պատրաստվում է բարձր մակարդակի հանդիպման՝ Սիրիայի ղեկավար նախագահ Հաֆեզ ալ Ասադի հետ: Նախագահների հանդիպումը տնտեսական պատժամիջոցների պայմաններում գտնվող Սիրիայի համար դիվանագիտական մեծ առաջընթաց կլինի: Ինչպես հայտարարել է ԱՄՆ-ի պետքարտուղար Ուորեն Քրիստոֆերը, Սիրիան եւ Լիբանանը նոր տարում կվերսկսեն իրենց բանակցությունները Իսրայելի հետ: Քրիստոֆերը Դամասկոսում է գտնվում նախագահ Ասադի հետ բանակցություններ վարելու համար: Նրանք պլանավորում են նախագահական բարձր մակարդակի [illegible] հանդիպումը, որը տեղի կունենա [illegible] ժնեւում: Նախագահները [illegible] նակելու [illegible] Սեւծովյան Արեւելքի խաղաղության գործընթաց: ■

Դատարան

ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ԳՐՈՒՊ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Հրեսակոծվել են Իջեւանի եւ Նոյեմբերյանի գյուղերը

երեկ եւ նախորդ գիշեր իրադրությունը Լեռնային Ղարաբաղի ռազմաճակատներում կտրուկ սրվել է: Մի քանի օր տեւած հարաբերական անդորրից հետո ադրբեջանական կազմավորումները վերսկսել են ռազմական գործողությունները դարաբաղյան ճակատի հարավարեւելյան ուղղությամբ: Նոյյան տաղան գործակալությունը հաղորդում է, թե ԼՂՀ մամուլի եւ լրատվության վարչության տվյալներով, ադրբեջանական կազմավորումները Բեյլագանի շրջանի ռազմական հենակետից ուժգին հրետակոծության են ենթարկել հայկական դիրքերը, որից հետո երեկ առավոտյան անցել լայնածավալ գրոհի: ԼՂՀ դաշտպանության բանակի ստորաբաժանումները հակահարված են տալիս բշնամուն: Երեկ կեսօրի դրությամբ ռազմաճակատի այս [illegible] գործողությունները շարունակվում էին: Կորուստների մասին տեղեկություններ առայժմ չկան: ԼՂՀ ռազմական հետախուզության տվյալներով, դարաբաղյան ռազմաճակատի արեւելյան երկայնքով նկատվում են հակառակորդի ռազմական տեխնիկայի եւ կենդանի ուժի զգալի կուտակումներ:

Ըստ նույն գործակալության, Հայաստանի դաշտպանության նախարարությունից հայտնել են, թե դեկտեմբերի լույս 10-ի գիշերը իրադրությունը սրվել է նաեւ Հայաստանի հյուսիսարեւելյան սահմանամերձ շրջաններում: Այսպես, Ադրբեջանի Ղազախի շրջանի զինված կազմավորումները հրետակոծել են Իջեւանի շրջանի Բերքաբեր, Սարիգյուղ, Վազաշեն եւ Նոյեմբերյանի շրջանի Ոսկեդար գյուղերի հայկական դաշտպանական դիրքերը: Հրետակոծումն ընդհատումներով շարունակվել է մինչեւ լուսաբաց: Հայկական կողմից տուժածներ չկան: Հայկական սահմանապահ ուժերը, ըստ հայտարարված միակողմանի հրադադարի, ձեռնպահ են մնացել դաշտասխան գործողություններից:

Մինչդեռ ադրբեջանական աղբյուրները հաղորդում են, թե իբր երեկ եւ [illegible] գիշեր Հայաստանի [illegible] տարածքից հրետակոծվել են Ադրբեջանի Ղազախի եւ Թռուզի շրջանների սահմանամերձ բնակավայրերը: Մանրամասնություններ չեն հաղորդվում:

«Ազգ»

Ընդդիմություն

Սահմանադրական խորհրդի հերթական նիստ

Դեկտեմբերի 10-ին Հայաստանի դեմոկրատական կուսակցության կենտրոնական գրասենյակում տեղի ունեցավ սահմանադրական խորհրդի հերթական նիստ:

Նիստը վարում էր ՀԴԿ նախագահ Արամ Սարգսյանը:

Քննարկվեցին ՀՀ սահմանադրական խորհրդի կողմից մշակվող միացյալ տարբերակի փորձագիտական առաջարկները ու նկատառումները: Նիստում ներկայացվեցին ՀՀ սահմանադրության մեջ սոցիալական պաշտպանվածության եւ սոցիալական իրավունքների իստակեցման հարցերը, որոշվեց սահմանադրության տարբերակը լրացնել նոր մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտի մասին հոդվածով: Քննարկվեցին նաեւ կառավարության եւ դատական մարմինների ձեւավորման սկզբունքների ճշգրտման, կոնստիտուցիայի հարցերը, որոնք ստացան վերջնական ձեւակերպում:

Սահմանադրական խորհրդի հաջորդ նիստը կկայանա դեկտեմբերի 14-ին, Հայաստանի Հանրապետական կուսակցության գրասենյակում: ■

digitised by A.R.A.R.@

Կարգավորում

Ադրբեջանը դատապարտ չէ փոխզիջման

Սկիզբը էջ 1

Դավիթ Շահնազարյանի եւ Ռուսաստանի արտգործնախարարի տեղակալ Անատոլի Ադամիշինի, նախագահի անձնական ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովի հետ հանդիպումների ժամանակ: Այս շաբաթվա ընթացքում ՀՀ նախագահի հատուկ հանձնարարություններով գծով դեսպանն առանձին հանդիպումներ է ունեցել Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Իրանի դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների հետ: Բոլոր այդ հանդիպումներն օտարերկրյա դիվանագետների նախածեռնություններն էին եւ նվիրված էին վերոհիշյալ խնդիրներին: Այդ կոնտեքստում դեսպանը դիտել նաեւ նախագահի հանդիպումը դեսպան Վլադիմիր Ստուդիշինի հետ:

Երեկվա բրիֆինգում ՀՀ նախագահի մամուլի քարտուղարն անդրադարձավ նաեւ ազգային դրամի շրջանառության խնդրին: Նա նշեց, որ մենք չունենք վալյուտային դաշարներ եւ բավարար քանակով ադրանքներ, որոնք դեսպանը է նպաստեն դրամի կայունացմանը: Վիճակը շտկելու ուղղությամբ աշխույժ բանակցություններ են վարվում դրամի կայունացման ֆոնդ ստանալու նպատակով: Հանրապետության նախագահը դիմել է Ռուսաստանին, Յոթնյակի երկրներին, Եվրոպական միության մնացած երկրներին եւ Միջազգային վալյուտային ֆոնդին նման խնդրանքով: Սպասվում է, որ մոտ 1,5 մլն. դոլար կստացվի արտասահմանում հայկական դրամը որոշ հուշանվեր վաճառելուց: Քննարկվում է ոսկուց եւ արծաթից հուշադրամ դատարտելու հնարավորությունը:

Կարեւոր է նաեւ արտահանման եւ ներմուծման մեխանիզմների ստեղծումը, որը պետք է լինի արդյունային դաշարներ ստեղծելու հիմնական ուղիներից մեկը: Որոշ ժամանակավոր միջոց, այս ամսվա երկրորդ կեսին, ըստ երեւույթին, որոշ արդյունքներ բաշխվելու են կտրոնով: Ի դեպ, դրամաշրջանառության հետ կապված հարցերի վերաբերյալ հարցազրույցում նախագահի մամուլի քարտուղարը պատասխանելով երկու շաբաթ առաջվա գներին վերադառնալու նախագահի հայտարարության վերաբերյալ հարցին, նշեց, որ դրա չիրականացման պատճառն այն է, որ մարդիկ, որոնք դրա կապակցությամբ տվյալներ էին տրամադրել նախագահին... սխալվել էին:

Արամ Աբրահամյանը տեղեկացրեց, որ Հայաստան է ներմուծվում որոշակի քանակությամբ մազութ, այդ գործը կազմակերպում են համատեղ կառավարությունը եւ «Հայաստան» հիմնադրամը: Օրինակ՝ Վանաձորում, համաձայն մամուլի քարտուղարի խոսքերի, այժմ ջեռուցվում է շենքերի 40 տոկոսը, տպասվում է, որ հաջորդ շաբաթ դրանց թիվը կհասնի 2/3-ի: Առաջիկա շաբաթում ուշադրության կենտրոնում կլինի Երեւանը: «Մենք ունենք բավարար վառելիք, սակայն խնդիրը կաբտայատների անկախ է էլեկտրասնուցումն է», հայտնեց մամուլի քարտուղարը: Այդ գործի համար մի քանի ամիս առաջ հատկացվել է գումար, սակայն համապատասխան օղակների անբավարար աշխատանքի պատճառով խնդիրը ժամանակին չի լուծվել»:

Գ. Ն.

Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ

Գլխավոր խմբագիր
ՏԱԿՈԲ ԱՐԵՏԻԲԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 581841

Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 542863

Apple® Macintosh®
համակարգչային շարվածքը
«Ազգ» թերթի

Azg
armenian daily

Editor
H. AVEDIKIAN / phone: 521635

47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Ոչնչի ձեւաչափման եւ տարածման երի հղումով
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

«Ձմեռ»

ԵՐԿՈՒ ՁՄԵՌ ՄԻ ՏԵՂ ՉԻ ԼԻՆՈՒՄ

Այո, իրոք որ երկու երեկ մի տեղ չի լինում: Եւ որովհետեւ այս տարի ձմեռը ժամկետից (նախօրոք չնախատեսված) շուտ եկավ, ու նա որոշես բնության ենթակայ ավելի պատկառազդու եւ տարիքով էր, իսկ «Ձմեռ» ծրագիրը դեռ կաթնակեր մանուկ, ուստի վերջինս համեմատաբար գիջեց իր դիրքերը: Մանավանդ որ նրա թիկունքին այնքան էլ ամուր չէին կանգնած, մինչդեռ ձմեռ-ը դանակին, ինչպես հարկն է, հետեւում էր բնությունը:

Սակայն «Ձմեռ» ծրագիրն իր անցյալում համեստությամբ հանդերձ նորանոր բարեգործական քայլեր անելու է մղում: Ըստ ոչ պաշտոնական տվյալների, ներկայումս պատրաստվում է հասարակությանը ներկայանալ «Հայ նավթասերների բարեգործական միությունը», որը միավորելու է այն քաղաքացիներին, ովքեր չեն մտնում կառավարության հաստատած 11 սոցիալական խմբերից եւ ոչ մեկի մեջ, սակայն նույնպես մրսում են: Որովհետեւ ցուրտ է, որովհետեւ ոչ բոլոր տեղերում է ջեռուցում լինելու: Նավթասերների միությունը նպատակ ունի իր անդամներին հատանելիք նավթը կաթիլ առ կաթիլ հավաքել համբերության բաժակի մեջ: Ընդ որում, լցվելու ընթացքում դրանից բաժին հանել որոշ բարձրամակարդակ գերատեսչությունների աշխատակիցների, որպեսզի նրանց ստացած (ըստ չշշված տվյալների) «ֆուջիկաները» պարապությունից չթախծեն: Միությունը մտադիր է օժանդակել նաեւ փողոցներում եւ բակերում նավթ վաճառող անհատների նավթահարերն ու նավթավերամշակման գործարանները «Ձմեռ» ծրագրի շրջանակներում Հայաստանի կառավարությանը տրամադրելուն, դրանով իսկ նպաստել բնակչությանը խոստացված նավթով ապահովելու կառավարության ջանքերին, մինչեւ որ ամերիկյան բաղձալի նավթը տեղ հասնի:

Հայ նավթասերների միությանը զուգահեռ ընթացքի մեջ է նաեւ Հայ փայտահատների միության ստեղծումը: Միությունն իր անդամներին կգնի է շրջխորհրդի գործարանների, յուրաքանչյուր անդամի տալով կացին եւ սղոց, նպաստելու բնակչությանը փայտով ապահովելու կորած-մոլորած որոշումների կենսագործմանը: Միությունը նպատակ ունի նաեւ համագործակցել ադրանքի վաճառող փայտը բանագրավողների հետ՝ իրավիճակի լարվածությունը բուլացնելու եւ հավասարումների անհայտների լուծումն ակնկալելով: Երբ չլինեն սուբյեկտիվ դատճառներ: Չնոր են բերվելու նաեւ տեսիներ «Գարուն 94» ծառատունկի ծրագրի համար:

Մոտ առաջապայում, ավելի որոշակի՝ եկող տարվա մարտ ամսին նախատեսվում է հանրապետության կառավարությանը ներկայացնել «Ձմեռ 93-94» ծրագրի այլընտրանքային տարբերակը, որի շրջանակներում վերոհիշյալ միությունները համատեղ մտադիր են դիմել Հայաստանի Գերագույն խորհրդին ճնարկելու ձմեռը որպես տարվա դանակ Հայաստանում հանդուրժելու նպատակահարմարության հարցը:

Իսկ առայժմ այս երկու միությունների հնարավոր եւ փաստացի անդամները, ինչպես նաեւ առանձին «էնտուզիաստ» քաղաքացիներ, իրենց հնարավորությունների սահմաններում ամեն ինչ անում են աջակցելու «Ձմեռ» ծրագրի նախապատրաստման աշխատանքներին մրսում են, հույս են տածում, «ժեկերում» ժամերով հերթ կանգնում ու տարբեր գներով նավթի կտրոն գնում, հիանում նավթի տոկայական 60-70 դրամանոց գնով ու... բնավ չեն մտածում «Ձմեռ» ծրագրի մասին անտերը շատ սառն անուն ունի, մտածելուց էլ մարդ մրսում է: Ասում են, երբ մրսելիս երգում ես, տաքանում ես: Հիշո՞ւմ եք երգի տողերը «Ձյունը երկար սպասեց գիշերվա խորհրդին»: Այս տարի ձյունը երկար սպասեց Նախարարների խորհրդին, սպասեց ու տեսավ, չէ, «Ձմեռ» ծրագիրը շատ է ուշանում, համբերությունը հատած իմն ա՝ առաջ ընկավ: Ընկավ, եկավ տեսավ, որ իրեն այդքան շատ չէին նախատեսել: Բայց ձմեռն իր բաժին լիզոդը չէ, որ եկել է, ոտքի մնա: Իսկ «Ձմեռ» ծրագիրը... Ասում են, պետություններից մեկում «Ձմեռ» ծրագիրը այդպես էլ ձախողվեց, որովհետեւ... ձմեռը չեկավ: Իսկ մեր հանրապետությունում... ախր ձմեռը շա՞տ շուտ եկավ: Ո՞վ էր սպասում...

Ցանկանալով «Ձմեռ» ծրագրի մեր այլընտրանքային տարբերակը, Հայաստանի «ձմեռաղիմացկուն» քաղաքացիներին խորհուրդ ենք տալիս հաջորդ ձմեռվա համար դատարտել անհատական «Ձմեռ» ծրագրեր: Միաժամանակ հույս ունենք, որ ձմեռը (տարվա եղանակը) ընդունմամբ կմոտենա հայ ժողովրդին ու շուտ կհեռանա նրանից:

ՀԳ. Նոյյան տարան լրատվական գործակալության հաղորդագրությունից տեղեկանում ենք, թե Երեւանի կենտրոնական շատ օգնության կայանի գլխավոր բժիշկ Սարգիս Աբրահամյանը զգուշացրել է, որ քաղաքի բնակիչները ուշադիր լինեն նավթավառների (հատկապես արտասահմանյան արտադրության «Ֆուջիկաների», «Ալադինների» եւ այլնի) նկատմամբ, քանի որ հաղորդում արդեն նկատվել են շնչ գազից թունավորվելու դեպքեր:

ԳԱԳԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Բանկ

Նավթային համատեղ պայմանագրերի երագրեր

Ադրբեջանի պետական նավթային ընկերության հետ համատեղ արտասահմանյան ֆիրմաների կոնսորցիումի մշակելիք «Շիրազ» եւ «Ազերի» նավթահանքերում նավթի հանույթի առավելագույն մակարդակը կկազմի տարեկան 25 միլիոն տոննա: Այդ մասին դեկտեմբերի 9-ին Պոստֆակտումի թղթակցին հայտնեց պետական նավթային ընկերության ղեկավար Նաթիկ Ալիեւը: Միայն այդ երկու նավթահանքերում կա 400 մլն տոննա «սեւ ոսկի»: ՆՏ

«Էքսոնը» «Շեւրոնը» եւ «Շելը» չեն մասնակցի կոնսորցիումին

«Կասպից ծովում նավթահանույթի ընկերությունների կոնսորցիումին ամերիկյան «Էքսոն», «Շեւրոն» եւ «Շել» ֆիրմաների մասնակցության մասին որեւէ խոսակցություն չի կարող լինել», խաբար տեղիսի թղթակցին հայտարարեց Ադրբեջանի պետական նավթային ընկերության նախագահ Նաթիկ Ալիեւը: Նա պարզաբանեց, որ «Էքսոնի» հետ կնքված պայմանագրով նախատեսվում է միայն վերամեկնաբանել 15-20 տարում կուսակված երկրաբանական երկրաֆիզիկական նյութերը, հաշվի առնելով համաշխարհային մակարդակի նոր տեխնոլոգիաները: Նման պայմանագիր է ստորագրվել նաեւ «Շեւրոն» նավթային ընկերության հետ: Իսկ վերջերս բավական ներկայացուցչություն բացած «Շել» ֆիրման առհասարակ որեւէ պայմանագիր չունի Ադրբեջանի պետական նավթային ընկերության հետ: ՆՏ

Վ. Ահմեդովը եւ Ս. Մամեդովը պաշտոնանկ

Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիեւի հրամանագրով, դեկտեմբերի 8-ի երեկոյան հանրապետության ղեկավարության ընդլայնված խորհրդակցությունում գլխավոր դատախազ Ալի Օմարովին կարգադրվել է քննության առնել հանրապետության փոխվարչապետ Վահիդ Ահմեդովի եւ ֆինանսների նախարար Սալեհ Մամեդովի ֆինանսական մեքենայությունների փաստերը: Նրանք երկուսն էլ պաշտոնանկ են արվել, եւ քննարկված փաստերի հաստատման դեպքում քրեական գործ կբացվի: Խորհրդակցությունում մասնավորապես հաղորդվեց Վ. Ահմեդովի ստորագրած նախարարների կաբինետի այն կարգադրության մասին, որի համաձայն ֆինանսների նախարարին հանձնարարվում էր 50 միլիոն ամերիկյան դոլարի մուրհակներ տալ «Առան» մասնավոր կորպորացիային, որն իր հերթին պետք է դառնար Ադրբեջանի պաշտոնական միջնորդը եւ այդ արժեքդրերն իրացնել արտասահմանում: Ինչպես խորհրդակցությունում հայտարարեցին Վ. Ահմեդովը եւ Ս. Մամեդովը, այդ մուրհակները տրվել էին նախկին նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի հրամանագրով եւ նախկին վարչապետ Փանահ Հուսեյնովի ճնշմամբ: Սակայն տվյալ դեպքում Ահմեդովն ու Մամեդովը մեղադրվում են իրենց ծառայողական լիազորությունների վերազանցման եւ այն բանի համար, որ օրենքը խախտելով մասնավոր ֆիրմայի միջոցով հանձնել են պետությանը պատկանած հսկայական վալյուտային գումար: ՆՏ

Առեւտրական կապեր ԱՊՀ երկրների հետ

Ադրբեջանի առեւտրի նախարարությունում նշանակ ստացվեց Ռուսաստանի առեւտրի կոմիտեի նախագահ Ի. Գորբաչովից, որը խնդրում է հաղորդել, թե հանրապետությունը կոնկրետ ինչ ավանդ կարող է ներդնել ԱՊՀ երկրների եւ Ռուսաստանի ապրանքափոխանակման աշխուժացման գործում: Ինչպես խաբար տեղիսի թղթակցին հայտնեց Ադրբեջանի առեւտրի նախարար Ռիզվան Հուսեյնովը, դա առ[illegible] բայլն է կապերի հաստատման ուղղությամբ, որոնց անհրաժեշտության մասին խոսվել էր Մոսկվայում 1993 թ. աշնանը ԱՊՀ երկրների առեւտրի նախարարների եւ առեւտրի պետվարչության ղեկավարների խորհրդակցությունում: Այն ստացել է միջազգային մարմնի կարգավիճակ, որը կոչված է նպաստելու ապրանքաշրջանառության բնագավառում ԱՊՀ երկրների տնտեսական համագործակցությանը: ՆՏ

Հրեաներ

Ազգային փոքրամասնությունները փորձում են համագործակցել

Սկիզբը էջ 1

Հանդիպումը կարեւոր էր նրանով, որ համայնքների ներկայացուցիչները առաջարկեցին քաղաքական կուսակցություններին ստեղծել համատեղ խորհուրդ, որը կգրավի ազգային փոքրամասնությունների խնդիրներով միաժամանակ զբաղվելով, որ դրան զուգահեռ կարելի է ստեղծել նաեւ Հայաստանի ազգային փոքրամասնությունների ասոցիացիա, որը հարկ եղած դեպքում կհամագործակցի կուսակցությունների հետ եւ կգրավի կոնկրետ հարցերով:

Եզրափակիչ խոսքում ՀՌԱԿ հանրապետական վարչության նախագահ Ռուբեն Միրզախանյանը հայտնեց, որ առաջիկայում կուսակցությունը նախատեսում է համայնքների ներկայացուցիչների հետ առանձին հանդիպումներ կազմակերպել, որոնց ընթացքում համագործակցության հետագա ուղղություններն ավելի կոնկրետանան: Բացի այդ, նա համայնքների ներկայացուցիչներին հրավիրեց համատեղ աշխատել ընտրությունների մասին օրենքի նախագծի վրա եւ ստեղծել այնպիսի տարբերակ, որը ազգային փոքրամասնություններին հնարավորություն կտա իրենց ներկայացուցիչն ունենալ խորհրդարանում: Ինչ վերաբերում է միջնակարգ կրթությանը, առայժմ որոշ. Միրզախանյանն այն կարծիքը հայտնեց, թե ծնողն ինքը պետք է որոշի, թե ինչ լեզվով է [illegible] ապարելու իր [illegible], իսկ հայկական եւ ոչ հայկական դպրոցներ պետք է խրախուսեն հավասար կերպով օգտվեն պետական օժանդակությունից: Ա. Բ.

Վիճակագրություն

Ռուսաստանի ընտրությունները Հայաստանի հասարակական կարծիքի կիզակետում

Չնայած Հայաստանում տեղեկատվությանը հասու լինելու դժվարություններին (սահմանափակ քանակությամբ էլեկտրաէներգիա տալու եւ թերթերի կրճատված տպաքանակի պայմաններում), հանրապետության բնակչությունն ուշադիր հետեւում է Ռուսաստանում նախընտրական պայքարի ծավալմանը: Նման եզրակացության համար հիմք է դառնում այն հարցումը, որը Նոյյան տարան գործակալության պատվերով անց է կացրել «Սոցիոմետր» սոցիոլոգիական անկախ կենտրոնը:

Երեւան քաղաքի եւ մերձակա գյուղերի 440 բնակիչների հարցման արդյունքներով, հարցման ենթարկված յուրաքանչյուր երեքից երկուսը տեղյակ են ՌԴ բարձրագույն օրենսդիր մարմնի առաջիկա ընտրություններին, իսկ յուրաքանչյուր երրորդը պատկերացում ունի այդ մարմնի առանձնահատկությունների մասին, մասնավորապես երկդալատանի կառուցվածքի մասին:

Յուրաքանչյուր չորրորդը տարբերում է քաղաքական բլոկների ուղղվածությունը, ընդ որում դրանց նկատմամբ հարցվածների ունեցած տրամադրվածությունը բաշխվել է հետեւյալ ձեւով.

1-ին տեղում տոկայական տնտեսություն ունեցող Ռուսաստան եւ արեւմտյան տիպի ժողովրդավարություն.

2-րդ տեղում ԽՍՀՄ-ի վերականգնում նորացված Ռուսաստանի գլխավորությամբ:

Մյուս տարբերակներն իրար հետ միասին 6% էլ չեն կազմել: Հարցվածներն իրենց ընտրությունը պատճառաբանել են, որ իրենց [illegible] [illegible] քաղաքականի դեղորում միայն Հայաստանը կարող է հույս ունենալ Ռուսաստանի հետ հավասար եւ լիարժեք հարաբերություններ հաստատելուն:

Ինչպես պարզաբանեց կենտրոնի տնօրեն Աիարոն Ադիբեկյանը, նույնիսկ անկախության նվաճման ընթացքում ազգայնամոլական տրամադրությունների բոլորի պայմաններում, հանրապետության բնակչության կեսից ավելին արտահայտվում էր հօգուտ Ռուսաստանի հետ ռազմական եւ տնտեսական միության պահպանման, ընդ որում, այս գաղափարի հետեւորդների թիվը շարունակում է աճել եւ այսօր 80%-ից պակաս չէ: Միեւնույն ժամանակ, աճել է Ռուսաստանի հետ քաղաքական սերտ միություն կազմելու կողմնակիցների թիվը:

Նման դինամիկայի ֆոնի վրա զարմանալի չէ, որ հարցվածների մեջ գտնվեցին եւ նրանք (մոտ 4%), ովքեր ունկնդիր եղան Ժիրինովսկու խորհրդին եւ առաջինն են ուզում «Ռուսաստանի ոտքերն ընկնել»: «Բոլոր դեպքերում գերակշիռ մեծամասնությունը կարծում է, որ Ռուսաստանում ընտրությունները ճակատագրական նշանակություն ունեն ոչ միայն Ռուսաստանի [illegible] Հայաստանի [illegible] Ռուսաստանում գոյություն ունեցող հայկական ափյոռի, այլեւ ամբողջ մարդկության համար: Դրա համար էլ նրանք հույսը դնում են ռուսների կողմից պատմական պատասխանատվության գիտակցման վրա», հայտարարեց Աիարոն Ադիբեկյանը: ՆՏ

digitised by A.R.A.R.@

Դարձ

Լույս եւ ջերմություն հայ մանուկներին

Մոտ 200 հայ երեխաներ ընթացիկ ձմեռը կանցկացնեն ջերմության եւ լույսի դայմաններում: Ռուսական մշակույթի «Գարմոնիա» միջազգային կենտրոնում հայտնեցին, որ դեկտեմբերի 11-ին 48 հայ երեխաներ կմեկնեն Ռուսաստանի Ուլյանովսկ եւ Պենզա քաղաքներ: Երեխաների մնացած մասը ձմեռը, որ նոյեմբեր ամսից արդեն խիստ զգաշուշ է երեւում, կանցկացնի Օրյոլի, Կալուգայի, Պերեսլավլ-Զալեսսկու դանսիոնատներում եւ գլուխերիկ դղրոցներում:

Այդ ձեռնարկումը հնարավոր դարձավ ռուսական մշակույթի «Գարմոնիա» միջազգային կենտրոնի եւ ռուսաստանցի հովանավորների՝ «Ռուսական ակումբի» նախագահ Ֆյոդոր Շելով-Կովեդյաեւի, «Տեխնոբանկի» վարչության նախագահ Ալեքսանդր Սորոկինի, նոր տնտեսաձեւերի ու սոցիալական նախաձեռնությունների ընկերակցության ղեկավար Անատոլի Ռակիտովի, դարոն Բախինի գլխավորած «Ռեգիոն» ընկերակցության եւ Ալեքսանդր Գուսինսկու «Մոսս» խմբի, ինչդես նաեւ հայկական միջազգային հասարակության փոխնախագահ Դերենիկ Աբրահամյանի նախաձեռնությամբ:

Մարդասիրական այս ձեռնարկումն անցկացվում է Ուլյանովսկ, Պենզա, Օրյոլ, Կալուգա, Պերեսլավլ-Զալեսսկու քաղաքների վարչակազմերի բոլոր ղեկավարների համաձայնությամբ: Ռուսական քաղաքներում հայ երեխաները ձմռան ամիսներին կբարունակեն ուսումը, կմասնակցեն էքսկուրսիաների:

Սնարք

Տեսակետ

ԿԱՅՈՒՆԱՑՈ՞Ւմ, ԹԵ ԽՈՐԱՑՈՒՄ

Թող որ մեր որոշ ղեկավարներ համոզեն մեզ, թե բնակչության կենսամակարդակի կայունացում է տեղի ունեցել: Ո՞վ կհավատա դրան, երբ ժողովուրդն իր մաշկի վրա արդեն բազմիցս զգացել եւ զգում է այդ «կայունացումը»: Թե չէ ի՞նչ կենսամակարդակի կայունացման մասին է խոսքը, երբ իշխանությունների ողորմած 7350 ռուբ. (36,5 դրամ) նվազագույն աշխատավարձով լավագույն դեպքում կարելի է գնել մեկ-երկու կգ կարտոֆիլ, 250 գրամ կարագ կամ դանիր, կամ էլ 1-2 օր օգտվել «փափախչի» վարորդների ծառայությունից:

Դեռեւս ամռանը «Նախադատարանում» էին «Ձմեռ-94» ծրագրին, հուսադրում, թե բնակչությանը նավթ ու նավթավառներ են բաժանելու: Եւ հանկարծ դեկտեմբերի սկզբին բնակչությանը 11-12 կատեգորիաների են բաժանում եւ նոր դարզվում է, որ նավթը հասկացվելու է միայն առավել անապահով ընտանիքներին: Մի՞թե այդ բաժանումը 3-4 ամիս առաջ հնարավոր չէր անել, եւ ժողովուրդը իմանար, որ նավթը միայն մի խավին է տրվելու, մարդիկ հույս չէին դնի կառավարության վրա ու ամեն մեկն իր գլխի ճարը կտեսներ, լինել-չլինելու փասի առջեւ չէր կանգնի:

Ազգային դրամի ներդրումը չի կարող կասեցնել փողի արժեզրկումը եւ կարգավորել գները, քանի դեռ դրամին զուգահեռ կբարունակեն ուժի մեջ մնալ մինչեւ 500 ռուբլիանոց արժեզրկված ռուբլիները: Ի՞նչ երաշխիք, որ այս անգամ էլ մեր հանրապետությունը չեն հեղեղի 1961-1992 թթ. թողարկած մինչեւ 500 ռուբլիանոց թղթադրամները:

Դրանց մի մասը փոխանակելու, մյուս մասն ավանդի ձեւով դահելու հնարավորություն ընձեռվեց: Մինչդեռ ազգային դրամին անցումը երկու կարեւոր նպատակ դնում է հետապնդեր: Նախ՝ շրջանառությունից հանել անօրինական ճանապարհով հանրապետությունը հեղեղած ռուբլու մի զգալի մասը, ապա փակել ռուբլու ներհոսքը: Ավելի արդյունավետ տարբերակ կլիներ, եթե յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն տվեր փոխանակելու բեկուզ կես միլիոն ռուբլի, մնացածը կորչեր: Իսկ այսպես հանրապետությունում եղած դրամն ամբողջությամբ դահանջվելու է: Դրան նպաստելու են հենց բանկերը՝ ելնելով իրենց շահերից...

1961-1992 թթ. թղթադրամները շրջանառության մեջ բողնելու վտանգի մասին զգուշացնում էին ընդդիմադիր կուսակցությունները, իսկոյն մարդիկ, բայց մեր բարձրաստիճան այրերը լռում էին:

Այս ծանր իրավիճակից դուրս գալու ելքը տեսնում եմ հետեւյալում. իշխանությունները, եթե ուզում են անսասան դահել իրենց դիրքերը եւ բարձրացնել հեղինակությունը, դեմ է գործնականորեն անցնեն ժողովրդի կողմը եւ վերջինիս աջակցությամբ դաստիարակ ծավալեն մաֆիայի ու հանցագործ աշխարհի դեմ: Միայն կտրուկ, արմատական ու կոշտ միջոցներով հնարավոր կլինի Հայաստանը փրկել կործանումից, ստեղծել ժողովրդական եւ իրավական դետություն:

Երկրորդ՝ շուկայական հարաբերությունները շուկայական, սակայն մեր իշխանությունները, եթե իրոք մտահոգված են սոցիալական արդարության հաստատման եւ ժողովրդի կենսամակարդակի բարելավման հարցերով, դեմ է անհապաղ, գոնե անցումային շրջանում, հանրապետությունում արտադրվող ապրանքները կտրուկաբար եւ կենսական անհրաժեշտության ապրանքների սահմանային, այսինքն, առավելագույն գներ սահմանեն եւ խոստորեն հետեւեն դրանց կատարմանը:

Երրորդ՝ հանրապետություն բերվող սննդամթերքի եւ մյուս առաջնային ապրանքների համար մտքս չգանձեն: Դրա փոխարեն բնակչության աշխատավարձից մի քանի տոկոս հարկ կարելի է գանձել, «նախագահի հարկ», կամ ինչ-որ այլ անվանումով, որը կարող է լիովին փոխհատուցել վերը նշված ապրանքների մաքսի արժեքը:

Չորրորդ՝ համաղազասխան նախարարությունների եւ գերատեսչությունների միջոցով հնարավորություն ստեղծել, որպեսզի սննդամթերք եւ այլ կենսական նշանակություն ունեցող ապրանքներ բերող ավտոմեքենաները մաքսատանը մաքրագին սպասելուց եւ կնիքը դնելուց հետո արգելվի դեսավտեսչության եւ հսկողություն իրականացնող մյուս մարմիններին ճանապարհներին այդեւս կանգնեցնել եւ խոչընդոտել բեռների տեղափոխմանը:

Ազգային դրամի ներդրումը եւ երեք ամիսը մեկ աշխատավարձի ինդեքսավորումը ցանկալի արդյունք չեն տա, դրամի արժեզրկումը եւ գների աճը չեն կանգնի, ժողովրդի կենսամակարդակը չի բարելավվի, եթե թվարկված միջոցառումներ, ինչդես նաեւ հոդվածում արծարծված հարցերը կլանի չկոչվեն:

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Իրավաբաբեսդան

Դարձ

Ո՞վ է փրկելու մեզ լումայափոխների այս շուկայից

Դիմացի մայթին ոստիկանը բռնել է մի գունաց երիտասարդի: Նրա կողքին կանաչ համազգեստով, դուբինկաները ձեռքին երկու երիտասարդ քաշքռում են նրան:

«Դոլլար չունե՞մ... Լսե՞ք ասեմ», խնդրում էր երիտասարդը, բայց լսող չեղավ: Հրմշտելով, փողոցն անցկացրին, բերին դեռի հացի խանութ: Դա նոյեմբերի 23-ի առավոտյան էր: Երեկոյան, երբ աշխատանքից վերադարձա, խանութում հավաքված կանայք, ինձ ճանաչելով, մոտեցան: Իրար ընդհատելով, դատմեցին, թե մի երիտասարդի խանութում այնքան են ծեծել, որ ոտքի վրա չի կարողացել կանգնել, բեւերից ու ոտքերից բռնած տարել են դիմացը, չգիտեմ՝ ո՞ւր:

Այս դեպքից երկու, թե՞ երեք օր անց, փողոցը ճեղքելով, շտապում էի աշխատանքի: Տեսա մի ոստիկան եւ կանաչ համազգեստով երկու դուբինկավոր բռնել էին մի վախվորած երիտասարդի: Հրեւում էր առաջին անգամ էր ընկել նման ծեռքերի մեջ: Շփոթված ինչ-որ բան էր ուզում բացատրել՝ չթողեցին:

Երկու կողմից բեւերը բռնած, մեկն էլ հետեւից հրելով, բերին, խոթեցին սպիտակավուն, համար չունեցող ծածկված մեքենան ու տարան: Մի տեսակ սառեցի: Ուղեղիս մեջ կայծակեց երեսունչորս թիվը: Նայեցի շուրջս: Ամբոխն անտարբեր նայում էր: Մարդկային արժանապատվությունս վիրավորված էր: Մտածում էի, ինչո՞ւ են իրավապահ մարմինների նման աշխատողները, այսինքն, պետության այդ ներկայացուցիչներն իրենց իրավունքի վերապահում այդքան բացահայտ արհամարհել մարդու մարդ կոչումը: Մի՞թե չեն հասկանում, որ այդ կարգի տեսարաններ սարքելով, սպվեր են գցում ո՛չ միայն իրենց նախարարության հեղինակության վրա, այլեւ՝ պետության: Այսպես իմ մեջ այնքան տվի ու առա, որ գլխապտույտ ստացվեց: Կես ճանփից ետ դարձա: Հասել էի փոստի մոտ, տեսա այդ նույն երիտասարդին:

«Տղաս, քեզ նոր ոստիկանատուն չտարա՞ն...»: Երիտասարդը գլուխը կախեց, հետո դառը ժպտաց. «Ոստիկանատուն չհասանք: Տարան մի քիչ ներքեւ, ինչպես փող ու դոլլար ունի, ծեռքիցս առան, բաց թողեցին: Ով դիմադրում է, նրան են տանում ոստիկանատուն: Սրանք հլա խղճով էին, չծեծեցին: Ափսոս, փողերս առան: Ի՞նչ երեսով եմ տուն գնալու, կանգնած էդ եմ մտածում: Մենք հո ուրիշ մարդ չե՞նք, մենք գործազուրկ ենք, առավոտից մինչեւ ուշ գիշեր ցուրտ կուլ տալով, մի քանի կոպեկ փող ենք աշխատում, որ տուն դահենք: Շատերինը իրենց փողերը չեն: Հարուստներից վերցնում են, այստեղ փոխանակում, որ իրենց էլ մեջը մի քանի կոպեկ մնա, տուն դահեն:

Չէ, ամեն ինչը իրենց վերեւից է գալիս...

- Վերեւի՞ց... Չէ՛, տղաս: Ես նրանց վերեւինին գիտեմ: Նա որ իմանա, թե ինչ օրին են հանում մարդկանց գլխին, դրանց կկախի՞...

- Միրաղեղյա՞նը...

- Այո, մի ժոտա, Վանո Միրաղեղյանը: Մեր գրական ընտանիքի տաղանդավոր արձակագիրներից է:

Ո՞վ դիմադրում է, նրան են տանում ոստիկանատուն: Սրանք հլա խղճով էին, չծեծեցին: Ափսոս, փողերս առան: Ի՞նչ երեսով եմ տուն գնալու, կանգնած էդ եմ մտածում: Մենք հո ուրիշ մարդ չե՞նք, մենք գործազուրկ ենք, առավոտից մինչեւ ուշ գիշեր ցուրտ կուլ տալով, մի քանի կոպեկ փող ենք աշխատում, որ տուն դահենք: Շատերինը իրենց փողերը չեն: Հարուստներից վերցնում են, այստեղ փոխանակում, որ իրենց էլ մեջը մի քանի կոպեկ մնա, տուն դահեն:

Չէ, ամեն ինչը իրենց վերեւից է գալիս...

- Վերեւի՞ց... Չէ՛, տղաս: Ես նրանց վերեւինին գիտեմ: Նա որ իմանա, թե ինչ օրին են հանում մարդկանց գլխին, դրանց կկախի՞...

- Միրաղեղյա՞նը...

- Այո, մի ժոտա, Վանո Միրաղեղյանը: Մեր գրական ընտանիքի տաղանդավոր արձակագիրներից է:

- Ի՞նչ է գրե, ասեմ կարդամ:

- Կարդացեք «Ծանր լույս» դատմվածքների ժողովածուն:

- Էդ ոնց որ ծանոթ է... Հա՛, «Քթից բերին» դատմվածքը էդ գրքից եմ հիշում: Հա՛, լավ է գրած: Էդ ուրեմն Միրաղեղյանն է գրե՞...

Հանկարծ սկսեց ծիծաղել:

- Ինչու ես ծիծաղում:

- Բա նա չի՞ իմանում, թե իրա զինվորներն ու աշխատողները ո՞նց են մեր կյանքն էլ՝ մեր քթից բերում... Մենք հո զոռեր չե՞նք, մենք հո չե՞նք բալանում: Աշխատանք որ չեն տալիս, բա մեռնե՞լ ենք»:

Գրողներն արարում են նաեւ համեմատությունների շնորհիվ: Ակամա հիշեցի իրական մի դեպք:

Մեր շենքի տակ խանութներ կան, որի դատճառով մեր բնակարաններում մկներ են երեւում: Մեր տներիցի երբեմն բակարդ են դնում: Մի օր լուսադեմին արթնացա, տեսա խոհանոցի անկյունում մի մուկ է ծվարել բակարդի մեջ: Ինձ տեսնելուն դես, սարսափած վերթռավ, որ փախչի, բայց չկարողացավ: Ես կարող էի նրան հինգերորդ հարկից շրջել: Սարսափելի զգացում է, երբ գիտես, որ մեկի կյանքը քո բռի մեջ է: Նստել նրա դեմ, մտածում էի, թե ո՞րն է այդ արարածի մեղքը: Ինձ չի խաբել, մարդ չի սպանել, գողություն չի արել, ավտոմեքենա չի առեւանգել: Քաղցից չմեռնելու համար, ընդամենը այցելել է մեզ, որ ուտելու բան գտնի, այսինքն, որ ծնվել է, ուզում է ապրել: Հացի փրանկներ գցեցի դեմը՝ չկերավ: Թակարդն զգույշ վերցրեցի, տարա դուրս, փողոցում բաց թողեցի, վերադարձա տուն ու բանաստեղծություն գրեցի «Խղճի տուրքը» վերնագրով, որ իմ հաջողված ստեղծագործություններից է:

Ինչո՞ւ այս դեպքը դատմեցի: Նախ՝ որպեսզի մեր հարգելի ոստիկանության որոշ աշխատողների դաժանության մեջ բաղ տամ բարություն ու խղճմտանք, որպեսզի ոչ միայն իրենց, այլեւ դիմացինի տեսանկյունից նայեն տվյալ երեւույթին, որի համար դատժում են նրան:

Ո՛չ ոք չի ուզում տեսնել, որ Տիգրան Մեծի դողոտայի երկարությամբ, երկու կողմից բնակելի շենքեր են, ուր ապրում են հարյուրավոր բնակիչներ, որոնք մի քանի շաբաթ է, զրկված են տարրական հանգստից: Չէ՞ որ այդ տներում հիվանդներ, ծերեր կան, երեխաներ կան, մարդիկ կան, որ աշխատանքից հոգնած ուզում են սեփական հարկի տակ խաղաղվել, գտնել իրենք իրենց, դուք ինչո՞ւ եք կորցնում... Ցավոք սրտի, ոչ մի դաշտոնյա չի ապրում այդ շենքերում: Մեծ մասը մտավորականներ են, ուսական դրամ ու դոլլար չունեցող մտավորականներ, որոնք տառապում են ուրիշների տարադրանքներից: Այդ ժխորից, կանչերով եփվող աղմուկից. տանջյակներով սեփական ավտոմեքենաների բենզինահոտից սիրտված դաստուհանները փակ են դահում, զրկվել են անգամ օդափոխությունից: Միավոր են ոստիկանության ավտոմեքենայի սարսափազդու շչակներն ու ահազանգները, բարձրախոսով առած դիտողություններն ու ավտոմեքենաների թվարկումը: Մեր շենքերի մուտքերը, որ առանց այդ էլ կեղտոտ էին, հիմա դարձել են զուգարան: Ամենասարսափելին ա՛յն է, երբ տնից դուրս ես գալիս, եւ հանկարծ թիթիզոցով երիտասարդներ են սարսափած վազում ասֆալտներն ի վեր: Դու էլ նրանցից սարսափած՝ ետ դառնում, մտնում ես տուն, ու դուռդ ոլոր փակում, անմիջապես չհասկանալով թե ի՞նչ է կատարվում: Սպասում ես, սպասում, մինչեւ ասֆալտների վրա շարվածները կամաց-կամաց իջնում են, գնում: Դուրս ես գալիս տնից, տեսնում ես մուտքերում, բակի այս ու այն անկյունում մարդիկ չորս կողմերը նայելով՝ դրամ են հաշվում եւ խղճում ես ոչ միայն նրանց, այլեւ քե՛զ: Ես մի տեսակ նվաստացած քայլում եմ «Երեւան» կինոթատրոնի մոտով ու մտորում, թե այդ շուկան ինչո՞ւ «Ուրարտու» կինոթատրոնի դռանը չէ, որտեղ բաց տարածություն կա, հեռու է բնակելի շենքերից, կամ ինչո՞ւ մի հարմար տեղ չեն ընտրում: Տարեւորեն են բերել, խցկել են փողոցի կոկորդն ու հարյուրավոր անմեղ բնակիչների քաշում են հազար ու մի դեպքի ու դիպվածի մեջ: Մի՞թե այս հարցով պիտի զբաղվի հանրապետության նախագահը կամ Գերագույն խորհրդի նստաշրջանը: Այս շենքերում ապրող երեխաների ու ծերերի անունից ո՞ւմ ուղղությանը դիմեմ, որ տեղափոխեն այս շուկան Տիգրան Մեծի դողոտայից: Տեսնես ո՞վ է լինելու այն երեւելի դաշտոնյան, որ մեր շենքերում ապրող հարյուրավոր մարդկանց փրկելու է տարադրանքից այս ուրակեղեմ աղմուկից, որ սանձա նրանց ասված, առաք օրինությունը...

ՄԵՏՍՔՍԵ

Մետրոյի մեքենավարների նախազգուշական գործադուլ: Դեկտեմբերի 10-ի առավոտյան ժամը 8-ից 10-ը Երեւանի մետրոյի մեքենավարները հայտարարել էին երկժամյա նախազգուշական գործադուլ: Ինչդես հայտնեցին մետրոդիտենի տնօրինությունում, գործադուլը դայմանավորված էր աշխատավարձի բարձրացման դահանջով: Մետրոդիտենի ղեկավարությանը ներկայացվել է գործադուլավորների դահանջների ծրար:

Սնարք

Դարձ

Շուկան եւ կենսամակարդակը

Որ հանրապետությունում սեփական դրամ մտցնելուց հետո տեղի է ունենում գների անընդհատ աճ, ոչ մեկի համար գաղտնիք չէ: Չի փրկում նաեւ այն որ ահուսարսափի միջոցով հանրապետությունում արգելված է առեւտուր անել ռուսական ռուբլով եւ դոլլարով: Նախագահի խոստումները, թե դրամ մտցնելուց հետո տեղի կունենա գների կտրուկ անկում, չարդարացան: Ավելին՝ տեղի ունեցավ տրամագծորեն հակառակը: Համոզվելու համար բավական է մտնել որեւէ շուկա: Որդես ելակետ ընդունենք այն տխուր իրողությունը, որ հանրապետությունում նվազագույն աշխատավարձը 36 դրամ է:

Եւ այսդես՝ տավարի միսն արժե ընդամենը 50 դրամ (նախանձելի էժանություն), սակայն կամ չկա, կամ մեծ հերթեր են: Կարագի կիլոգրամն արժե 170 դրամ (սրանք բոլորը թիվ 2 կոլտնտեսային շուկայի գներն են, բեւեւ հիմնական առեւտուրը կատարվում է ոչ թե շուկայի ներսում, այլ մերձակայքում): Այլ կերդ ասած, շարքային բոշակառուն իր կենսաթոշակով կարող է գնել ամսական ընդամենը 210 գրամ կարագ: Թոշակառուն ավելի ծանր կացության մեջ կընկնի, եթե հանկարծ որոշի նաեւ ձու ուտել: Բանն այն է, որ 30 ձուն արժե 300-350 դրամ (մանրը՝ 300, խոշորը՝ 350), մինչդեռ հազիվ թե գտնվի որեւէ իրեն հարգող թոշակառու, որը համաձայնվի ամսական երեք ձու ուտել: Անհամեմատ ավել էժան է խնձորը՝ 15-25 դրամ: Սակայն մի ցավալի փաստ՝ վաճառողները կտրականապես հրաժարվում են ընդունել մանր ռուբլիները եւ պահանջում են միայն դրամ: Մի խոսքով, ահա եւ քեզ շուկայական հարաբերություններ: Միակ համեմատաբար էժան մթերքը՝ միսը գնելը կարող է խիստ վնասակար լինել առողջության համար, որովհետեւ «բաստուրմաչիները» մսի լավ կտրոնները այն գլխից գնում են, իսկ մսավաճառը սպառնում է մնացորդի մեջ ոսկորի քանակության մասին դատողություններ անող գնորդների գլխին տալ վեճի առարկա միսը:

Շուկաները կամաց-կամաց սկսել են նմանվել դատերազմական տարիների դասական շուկաներին: Գնալով ավելի ու ավելի մեծ տեղ են զբաղեցնում օճառը, մոմը, նավթը, լուցկին, տնական օդին եւ այլն: Ճիշտ է, դեռ կարելի է այդ նույն շարքում հանդիպել նաեւ բանանի կամ նարնջի արկղերի, սակայն ընդհանուր դատկերի գունագեղությունն աստիճանաբար վերանում է: Իսկ գները... Եթե ներկայումս հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը փորձենք հավասարել ըստ առաջին անհրաժեշտության ապրանքների գների, ապա կստացվի, որ դա կկազմի «լճացման տարիների» 36 կոդեկը՝ ըստ լուցկու, 72 կոդեկն ըստ կարագի, մոտ մեկ ռուբլի՝ ըստ մսի եւ այլն: Այսինքն լավագույն դեպքում 1 ռուբլի: Իսկ եթե հիշենք վարչապետի այն աշխարհացունց հայտարարությունը, թե մեր կենսամակարդակն ամենեւին չի իջել (արմատ ու զարմատ), ապա մնում է ենթադրել, որ նախկինում մեր նվազագույն աշխատավարձը մեկ ռուբլու չէր հասնում: Սակայն, ինչդես ասում են, ծուխն առանց կրակի չի լինում, ուստի կարելի է ենթադրել նաեւ, որ ոմանց կենսամակարդակն իսկապես չի իջել:

Ա. Բ.

Նոր տարուն լույս կունենա՞նք

Երեկ կայացած մամուլի ասուլիսում Երեւանի քաղաքապետ Վահագն Խաչատրյանը հայտնեց, որ քաղաքի ղեկավարությունը բոլոր ջանքերը գործադրում է Երեւանի բնակիչներին դեկտեմբերի 31-ին եւ հունվարի 1-ին ուրջորյա էլեկտրամատակարարում ապահովելու համար: Նշվեց նաեւ, որ քաղաքի որոշ շրջաններ արդեն ջեռուցվում են: Հայտարարված մյուս բաղամասերի ջեռուցման կազմակերպման համար անհրաժեշտ է 80 կմ կաբել եւ 50 տրանսֆորմատոր տեղադրել, ինչը կապահովի կաբայաստների ուրջորյա աշխատանքը: Խաչատրյանը հայտարարեց, որ անխափան էլեկտրասպահովման համար նախատեսված 87 օբյեկտներից առայժմ ապահովված են միայն 54-ը: Մնացածների մատակարարումը կավարտվի հունվարի կեսերին: Նա նաեւ հայտնեց, որ քաղաքային իշխանությունները սկսել են խիստ միջոցառումներ կիրառել «ստվերային» էլեկտրացանցի դեմ:

ԼՏ

digitised by A.R.A.R.@

Քաղաքական Քննարկում

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քաղաքագետ Տիգրան Հայրապետյանի այս նյութը պատրաստվել է հոկտեմբեր ամսին, Մոսկվայում տեղի ունեցած արյունալի իրադարձություններից հետո, արեւմտյան հեռազրական կենտրոններից մեկի պատվերով: Հեղինակի համաձայնությամբ տպագրում ենք այն, քանզի կարծում ենք, որ առաջադրված ոչ միանշանակ տեսակետները պարունակում են լուրջ հարցադրումներ, որոնց պատասխանները ցայսօր տացված չեն:

Եթե գորբաչովյան ժամանակաշրջանի վերջին տարիներին մոսկովյան կենտրոնը անընդհատ հանդես էր գալիս ազգային ծայրամասերում քաղաքական զարգացումների հետեւից վազողի դերում, անգամ ամենաբիրտ ուժի կիրառմամբ չկարողանալով կանխել դրանք, արդա Բորիս Ելցինի իշխանության տարիներին տեղի է ունենում տրամագծորեն հակառակը: Պետական ինքնիշխանության բոլոր հատկանիշներն ունեցող նորակազմ անկախ պետությունների հայացքն ուղղված է Մոսկվա, այնտեղից արձակվող հրահանգների կատարման եւ քաղաքական մթնոլորտի փոփոխությանը համադատասխան շարժվելու պատրաստակամությամբ: Այս տեսակետից, Մոսկվայում հոկտեմբերյան իրադարձությունների նկատմամբ նախկին հանրապետությունների վերաբերմունքը բացառություն չեղավ: Բորիս Ելցինի գործողությունների անվերապահ պաշտպանի դերում հանդես եկան տրամագծորեն տարբեր քաղաքական հիմք ունեցող հանրապետական առաջնորդները՝ կոմունիստական անցյալից սերած Նուրսուլթանից եւ Ալիեւից մինչեւ ժողովրդավարների համբավ վայելող Տեր-Պետրոսյանն ու Ակայեւը: Ավելին, հանրապետությունների ղեկավարներից յուրաքանչյուրն իր պարտքը համարեց օգտագործել ընդդիմության նկատմամբ Բորիս Ելցինի «հաղթանակը» Մոսկվայում, սեփական իշխանությունն ամրապնդելու եւ տեղական ընդդիմությանն ավելորդ անգամ սաստելու համար:

Հայաստանի կառավարմանն մասնակցի ու հեռուստատեսության հրապարակումներից կարելի է ենթադրել, թե նախագահ Տեր-Պետրոսյանն ու նրա վարչակարգը անձնական հաղթանակ էին տարել մոսկովյան պայքարում: Որոշ առումով դա համապատասխանում է իրականությանը, քանզի տեղական դիտորդների կարծիքով, Տեր-Պետրոսյանի իշխանությունը Հայաստանում անսասան է այնքան ժամանակ, քանի դեռ Մոսկվայում հաստատուն են Բորիս Ելցինի դիրքերը: Նախագահն ինքը բազմիցս կրկնել է, որ հայ-ռուսական հարաբերությունների պատմության մեջ երբեք այնպիսի ջերմ հարաբերություններ չեն արձանագրվել, ինչպիսիք առկա են նախագահներ Ելցինի եւ Տեր-Պետրոսյանի միջեւ: Հարկավ թե Հայաստանում որեւէ մեկը դեմ լիներ կամ դժգոհ նման փաստից, եթե այն ցօգտագործվեր ընդդիմությանն ահաբեկելու նպատակով:

Իրականում, սակայն, վարչակարգի կողմից նման կանխարգելիչ մեթոդների կիրառումը կարծում ենք, ավելորդություն է, քանզի ընդդիմությունը Հայաստանում վաղուց արդեն անհասանելի ճգնաժամ է ապրում, ոչ միայն մրցակցություն չկազմելով Տեր-Պետրոսյանի վարչակարգին եւ նրա քաղաքական հենքը հանդիսացող Հայոց համազգային շարժմանը, այլեւ ծառայում է վերջիններիս ժողովրդավարական իմիջին, ոչսիրանելով բազմակուսակցականության եւ քաղաքական այլակարծության պատրանքը:

Քաղաքական ընդդիմությունը Հայաստանում ի սկզբանե բաժանված էր երկու ճամբարի: Առաջինը սփյուռքի ազգանվեր կուսակցություններն են՝ Հայ հեղափոխական դաշնակցությունն ու Ռամկավար ազատական կուսակցությունը, որոնք Հայաստանում կոմունիստական վարչակարգի ստեղծումից հետո վերադարձան հայրենիք եւ սկզբնական շրջանում բուռն քաղաքական գործունեություն ծավալեցին, էապես նպաստելով խորհրդային համակարգի կաղապարների հաղթահարմանը եւ բազմակուսակցության ու այլակարծության սաղմերի ձեւավորմանը: Նրանց ընդհանրապես, որ Հայաստանը խորհրդային միակենտրոնությունից չընկավ ՀՀՇ-ական միակենտրոնության գիրկը, քանզի այդ փույթում ինն կոմունիստական ուժերի մի մասն արդեն «դեմոկրատացել» էր, մյուսը բարոյալքված էր եւ անդամալույծ, իսկ տեղական մյուս կուսակցություններն ու կազմակերպություններն ընդամենը ածանցվում էին ՀՀՇ-ից: ՌԱԿ-ի եւ ՀՀԴ-ի ընդհանրությամբ էր նաեւ, որ Հայաստանում ձեւավորվեց լայնախոհ մասնակցությամբ ոչ պետական մասնակցի մենիշխանությունը: Միաժամանակ, հենց այդ փույթում արագ արդյունքների հասնելու անհրաժեշտությունից թելադրված շտապողականությունը ոչնչացրեց նոր կուսակցությունների ներկա խորը ճգնաժամը: ՌԱԿ-ը եւ ՀՀԴ-ն տեղում ի չգոյ դարձնելու համար ստիպված էին իրենց շարքերը համալրել մասամբ նախկին կուսնոմենկլատուրայի կադրերով, մասամբ էլ ՀՀՇ-ից օտարված ռենեգատներով, որոնք, ինչպես ցույց տվեց ժամանակը, կայուն հենք չդարձան այդ կուսակցությունների համար: Նույն մեխանիզմը գործարկվեց նաեւ խորհրդարանում կուսակցական պատգամավորական խմբակցությունների ձեւավորման ժամանակ: Ժամանակին իրավունք չունենալով մասնակցել խորհրդարանական ընտրություններին, նրանք ստիպված էին պատգամավորների «որսը» կատարել արդեն ընտրվածների շարքերից, նույն եղանակով: Դա հնարավորություն տվեց «քաղաքակիրթ» տեսք տալ խորհրդարանին, ինչը լիովին բավարարում էր նախագահ Տեր-Պետրոսյանին եւ նրա կողմնակիցներին, սակայն այն շոշափելի վնաս հասցրեց այս երկու կուսակցությունների իմիջին:

Ընդդիմության երկրորդ ճամբարը տեղական ծագում ունեցող կուսակցություններն են, որոնց անդամների քանակն ու ազդեցությունը զանգվածների շրջանում հիմք է տալիս որակելու նրանց իբրեւ «գրպանի» կուսակցություններ, առանց որեւէ լուրջ ակնկալիքների եւ հեռանկարի: Թերեւս բացառություն է կազմում 1993-ին իր գործունեությունը վերականգնած կոմունիստական կուսակցությունը, որը մեծամասնակ պատգամավորական խմբակցություն կազմեց իր նախկին համակիրներից:

Ինչպես նախկին խորհրդային այլ հանրապետություններում, կոմունիստները Հայաստանում մեկ միասնական ընդհանրություն չեն կազմում: Նրանց առավել ազդեցիկ մասն արդեն նոր վարչակարգի հետ կամ անմիջականորեն, օգտագործելով հին կադրերն ու նորաթուխ դեմոկրատների կոմունիստական անցյալը, սանձնելով բարձր պետական պաշտոններ կամ բավարարվելով շահույթի աղբյուրների վրա վերահսկողությունը պահպանելով, միաժամանակ մնալով սպասում, եւ կամ դա արվեց ոչ անմիջական ճանապարհով, նոր վարչակարգի առաջին շարքերը մղելով կուսակցության երիտասարդ ռեզերվին՝ նախկին կոմերիտական ակտիվիստներին:

Երկրորդական եւ երրորդական դիրքերում գտնվող գաղափարական նվիրյալները փորձեցին ժամանակակից տեսք տալ կոմունիստական գաղափարներին եւ ստեղծեցին Հայաստանի Դեմոկրատական կուսակցությունը: Հաճախ ավելի ուշ, երբ ուկրայնական կաթվածից ժողովուրդը կարողացավ էր աստիճան առ հին ժամանակները, Հայաստանում զրանցվեց նոր կոմունիստական կուսակցությունը, ուր սակայն չընդգրկվեցին հին հեղինակություններից ոչ մեկը: Քաղաքական շրջանակներում շրջող շշուկները հավաստում են, որ Հայաստանում կոմունիստական շարժման վրա վերահսկողության համար անգիջում պայքար է գնում նախկին կոմերիտական ակտիվիստների թեւերի միջեւ: Մեկը Կարեն Դեմիրճյանի թեւն է, որը ազդեցիկ դիրքեր է գրավել Հայաստանում: Մյուսը Դեմիրճյանին հաջորդած կոմկուսի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի թեւն է, որը խստորեն հետապնդվել է ժողովրդավարների կողմից եւ որի վերնախավն այժմ կենտրոնացած է Մոսկվայում, ազդեցիկ կապեր պահպանելով ռուսական իսթեբլիշմենտի հետ:

Հոկտեմբերյան իրադարձությունները Մոսկվայում նորաստեղծ հայկական կոմկուսի աստեղային ժամն էր, որը սակայն չափազանց կարճ տեւեց: Մոսկվայում կարմրադարյնագույնների խռովության ձախողումից հետո նրանց հայ համակիրների շարքերում խուճապ է առաջացել, ինչը վկայում է, որ այնտեղ հաղթականությունը :լաս են հասկանում: Նախ, անկախ այն բանից, թե ինչ իշխանություն կլինի Մոսկվայում, հանրապետական կոմկուսներին Մոսկվան դիտարկելու է իբրեւ բնական դաշնակիցների, որովհետեւ նրանք պաշտպանում են գլխավոր գաղափարը կարմրության վերականգնումը: Երկրորդ, եթե անգամ հարց ծագեր Հայաստանում իշխանությունը կոմունիստներին հանձնելու վերաբերյալ, արդա այն ոչ մի պարագայում չէր տվի ներկայիս Կոմկուսի ղեկավարներին, այլ իրական լծակներին տիրապետող դեմիրճյանականներին: Այսինքն, լավագույն դեպքում կփոխվեր իշխանության ֆասադը, իսկ բյուրոկրատական ապարատն ու տնտեսական արքաները կմնային նույնը: Սա Հայաստանի քաղաքական հասակարգի իրական վիճակն է, որը վերաբերում է ոչ միայն Կոմկուսի իդեալիստներին, այլեւ մյուս քաղաքական կուսակցություններին: Ինքը նախագահ Տեր-Պետրոսյանը հրապարակայնորեն հայտարարել է, որ եթե իշխանությունը հանձնելու խնդիր ծագի, արդա նա կգերադասի կոմունիստներին «դաշնակցականների նման բախտախնդիրներից»: Այս դեպքում, դաշնակցականների հավաքական անվանման տակ հասկացվում էր ողջ ընդդիմությունը, որովհետեւ Տեր-Պետրոսյանը նրանց բոլորին հավասարապես անընդունակ եւ բախտախնդիր է համարում:

Եթե Ռուսաստանի նախագահին կարիք եղավ անցնելու քաղաքական պայքարի լուրջ փորձությունների միջով երկրի բազմաբերս ընդդիմության վրա վերահսկողություն հաստատելու եւ հնազանդ խորհրդարան ունենալու ճանապարհին, արդա նախագահ Տեր-Պետրոսյանն այդ հարցերը լուծեց կարճ ժամանակամիջոցում եւ առանց մեծ ցնցումների:

Ի տարբերություն Բորիս Ելցինի, Տեր-Պետրոսյանն իշխանության անցնելուց անմիջապես հետո իր ձեռքում կենտրոնացրեց երկրի հիմնական տնտեսական հզորությունները կադրային փոփոխությունների ճանապարհով: Նա փոխարինեց հին դիրեկտորական կորպուսը հիմնականում ոչ ձեռնհաս, բայց իր իշխանությանը նվիրված մարդկանցով: Եւ այսօր ՀՀՇ-ում եւ Նախագահի շրջապատում գոյություն ունեցող լարվածությունը կապված է նախագահական կուսակցության առավել ծայրահեղական ուժերի այն պահանջների հետ, որոնցով տնտեսական բոլոր լծակներն անխտիր հանձնվեն իրենց կուսակցության կողմնակիցներին: Այսպիսով, նախագահ Տեր-Պետրոսյանն ի սկզբանե զրկեց ընդդիմությանը ֆինանսատնտեսական հնարավոր աջակցությունից դիրեկտորական կորպուսի կողմից, այսինքն, արդյունավետ քաղաքական գործունեության համար անհրաժեշտ հենակետից: Ինչ վերաբերում է ազատ ձեռներեցությանն ու նրանց կողմից քաղաքական ուժերին հնարավոր աջակցությանը, արդա գործարար միջավայրը Հայաստանում ուշի ուշով վերահսկվում է նախագահի համակիրների գլխավորած վերահսկիչ պատժիչ կառույցների կողմից, որոնք օրենսդրական եւ տնտեսական լիակատար քաոսի պայմաններում ի զորու են կասեցնելու ցանկացած գործունեություն, որը կհակասի իրենց շահերին: Պատահական չէ, որ Հայաստանում բարգավաճում են հիմնականում այն տնտեսական օղակները, որոնք կամ հիմնադրված են կառավարական շրջանակների աջակցությամբ, կամ ամենատես փոխհարաբերությունների մեջ են նրանց հետ:

Հայաստանի իշխանությունների նման քաղաքականությունը դրդեց ընդդիմությանը ոչ ստանդարտ լուծումների: Այսպես, «գրպանի» կուսակցությունները Քրիստոնեա-դեմոկրատական կուսակցությունը, Ազգային ինքնորոշում միավորումը, Սահմանադրական իրավունք միությունը, Հանրապետական կուսակցությունը սերտ հարաբերություններ են հաստատել Արեւմտյան Եվրոպայի եւ ԱՄՆ-ի գաղափարակից շրջանակների հետ եւ փաստորեն ֆինանսապես սնուցվում են նրանց կողմից, թեեւ այդ մասին բարձրաձայն արտահայտվելն ընդունված չէ: Հայաստանի կոմունիստական կուսակցության կարիքներին անտարբեր չեն Մոսկվայում, առանձնապես այնտեղ, կենտրոնացած նախկին հայկական կուսնոմենկլատուրայի շրջանակներում: Եւ չնայած այս ամենը հակասում է Հայաստանի օրենքներին, իշխանությունները որեւէ վերաբերմունք չեն ցուցաբերում: Միմյանց նեղություն չպատճառելու լուռ համաձայնությունը հավասարապես երկու կողմերին էլ լիովին բավարարում է:

ՌԱԿ-ը եւ ՀՀԴ-ն այդ հարցում կարծես թե ավելի բարվոք վիճակում են, քանզի տասնամյակների աշխատանքով հղկված կառույցներ ունեն տիրույթում, որոնք կարող են հոգալ նրանց կարիքները հայրենիքում: Որոշ առումով, այդպես էլ արվում է, սակայն ակնհայտ է, որ նվիրատվություններից ձեւավորվող, տպառման բազմաթիվ հասցներ ունեցող եւ ազգային կառույցների կողմից վերահսկվող այդ ֆինանսական միջոցները այլեւս չեն կարող մրցունակ լինել այն անսահմանափակ, չվերահսկվող եւ կայուն ինքնավերարտադրություն ունեցող միջոցների հետ, որոնց տնօրինում են իշխանությունները եւ նրանց քաղաքականությունը պաշտպանող շրջանակները: Եթե անգամ ավանդական կուսակցությունները սառեցնեն տիրույթում իրականացվող իրենց բոլոր ծրագրերը եւ ծախսերը նորաստեղծ պետականության կարիքների համար, ինչը գործնականում անհնար է, միեւնույն է նրանց ներդրումները քաղաքական պայքարում չեն հավասարակշռի իշխանությունների միջոցներին (նավթամթերքների, սննդի եւ առաջին անհրաժեշտության այլ ապրանքների կիսասվերային սղեկույցային առեւտուր ֆանտաստիկ բարձր գներով, որը վերահսկվում է պետության կողմից եւ, իհարկե, բազմամիլիարդանոց ռուսական փոխառություններ):

Օրեցօր վաստակող ֆինանսական վիճակն առաջ է բերում խնդիրներ, որոնք հարցականի տակ են դնում ընդդիմադիր մասնի գոյությունը: Եթե բովանդակության տեսակետից այն դեռ դիմանում է մրցակցությանը եւ պահպանում առաջին դիրքերը, ապա ֆինանսական հարցերում, այն արդեն էապես զիջում է կոմերցիոն կառույցների կողմից հովանավորվող դեղին մամուլին: Երկրում ամեն ամիս սկսի նման աճող նորանոր մամուլի օրգանների մի մասն անհետանում է նույնքան աննկատ, որքան աննկատ հայտնվել էր, քանզի որեւէ նոր արժեքավոր խոսք չի բերում: Մնում եւ իրենց դիրքերն են ամրապնդում հիմնականում այն օրգանները, ում թիկունքում կանգնած են հզոր կոմերցիոն կառույցներ: Ի տարբերություն ընդդիմադիր մամուլի, նորաստեղծ մամուլը ուժգին աշխատանք է տանում երկրում ձեւավորված նոր իրողություններին հասարակությանը համակերպելու ուղղությամբ: Մամուլի համատարած դայջեստացմանն ու խրախճանքանացմանն ավելանալու է գալիս հարձակողական իշխանամետության հոսանքը, որը պատրաստված է մեծ ֆինանսներով եւ առաջնորդվում է «Հայաստանի Հանրապետություն» պատանաթերթի կողմից: Ի վերջո դա հանգեցնելու է նրան, որ ընդդիմադիր մամուլում անհամեմատ ցածր վարձատրվող լրագրողական եւ տեխնիկական կազմը անցնելու է բարձր վճարումներ առաջարկող եւ հանձնարարական դիրքերի վրա գտնվող մամուլ: Հայաստանի պայմաններում, որ բարձրակարգ մասնագետների շրջանակը նեղ է, դա լուրջ խնդիր է:

Ընդդիմադիր մամուլի ճգնաժամի խորացմանը նպաստում է նաեւ այն ֆինանսավորող կուսակցությունների քաղաքական կաղապարացումը: Սա առավել ցայտուն է ՀՀԴ մամուլի օրգանների օրինակում: ՀՀԴ կենտրոնական օրգաններում «Երկիր» օրաթերթում եւ «Ազատամարտ» շաբաթաթերթում նախկինում տեղ տվող ազատ խոսքի շրջանակները հետեւողականորեն նեղացվում են, փոխարինվելով կուսակցական լրագրողների դոգմատիկ նյութերով: Ակնհայտորեն դոգմատիկ է եւ միակողմանի նաեւ ակնհայտորեն կոմկուսական «Գոլոս Արմենիի» օրաթերթը: Նման վտանգից առաջացած չէ նաեւ ՌԱԿ-ի «Ազգ» օրաթերթը, որն առայժմ հավատարիմ է մնում նախկինում որդեգրած ազատական սկզբունքներին, բայց փոխարենն ստիպված է էապես կրճատել իր տպաքանակը: Դժվար է միանշանակորեն ասել, կարվա՞ծ է արդյոք առաջին փաստը երկրորդի հետ, բայց «Ազգը» ստիպված եղավ տպաքանակի շոշափելի կրճատում կատարել, եւ նրա ֆինանսական հեռանկարը անմխիթար է թվում:

Սակայն առավել բարդ խնդիրը ՀՀԴ-ն եւ ՌԱԿ-ը ունեն իրենց ներսում եւ առանձնապես խորհրդարանի պատգամավորական խմբակցությունների հետ հարաբերություններում: Եթե Կայմինիայի նախագահի կողմից իր հանրապետության գերագույն խորհրդի պատգամավորներին «գնելու» փաստը հայտնի դարձավ բոլորին, արդա համանման երեւույթը Հայաստանում լռության է մատնված եւ ենթակա է տարուի: Հայաստանի նախագահը չի գրել գերագույն խորհուրդը եւ ֆինանսական աջակցություն ցույց չի տալիս ընդդիմադիր պատգամավորներին: Պարզապես իշխանությունները չեն խանգարում հայ օրենսդիրներին սեփական կոմերցիոն կառույցներն ունենալ եւ վաստակել ավելին, քան աշխատանքի վայրից նրանց տվող քան-երեսուն դոլարի չափ աշխատավարձն է: Իսկ թե ինչո՞վ են փոխհատուցում պատգամավորներն իրենց բիզնեսի ապահովության դիմաց, կարելի է միայն կռահել: Չնայած ընտանեկան խնդիրները գաղտնիության անանցանելի հողով պատելու համար ջանքերին, դրանք թաքցնելն օրըստօրե ավելի դժվար է դառնում:

Ընդդիմության դեմ պայքարում նախագահ Տեր-Պետրոսյանը հաջողությամբ է կիրառում նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խնդիրը: Ռազմաճակատներում լարվածության կամ ռազմական անհաջողությունների դեպքում, ընդդիմության ձայնը խեղդվում է «հայրենիքը վտանգված է», «իրավիճակը ծանրացնելու փորձերն ազգային դավաճանություն է», «այս ծանր պահին ազգային միասնականություն է պետք» կառավարական կարգախոսների ճնշման ներքո: Իսկ առավել ազդեցիկ կուսակցությունները՝ ՀՀԴ-ն եւ ՌԱԿ-ը ստիպված են միշտ հաշվի նստել այս կոչերի հետ, քանզի տիրույթում, որ ավանդականորեն կենտրոնացած է նրանց հասարակական հենքը, խիստ զգացմունքային վերաբերմունք են ցուցաբերում նման իրավիճակների նկատմամբ: Եւ ընդհանրապես, եթե ռազմաճակատներում հաջողություններ են գրանցվում, արդա ընդդիմության ձայնը կրկին լռեցվում է իշխանությունների կողմից զգալի զանգվածային աղմուկով: Փաստ երեւանակ, որ հաղթողի եւ տանուլ տվողի տեղերը երբեք չեն փոխվում:

Հայաստանում նոր սահմանադրության ընդունման գործում ընդդիմությունը կարծես թե վերջին փորձն է անում իրավիճակը շտկելու ուղղությամբ: Միմյանց միջեւ գաղափարախոսական լուրջ տարաձայնություններ ունեցող ընդդիմադիր վեց կուսակցությունները, այնուամենայնիվ, կարողացան միավորվել եւ մշակել մեկ ընդհանուր սահմանադրական նախագիծ, որը պետք է մրցի նախագահական տարբերակի հետ: Սա իս կատես լուրջ քայլ է ընդդիմության կողմից, քանզի առանձին առանձին կուսակցությունները հազիվ թե կարողանային հակակշռել նախագահական տարբերակին:

Այնուամենայնիվ, դիտարկումները ցույց են տալիս, որ անգամ միավորված վիճակում հաջողության հասնելու ընդդիմության շանսերը շատ փոքր են: Եթե սահմանադրական վեճերն ընթանան ոչ հոգուս նախագահ Տեր-Պետրոսյանի եւ նրա համախոհների, ապա վերջիններիս ձեռքում բավարար լծակներ կան ցանկացած պահին այն կասեցնելու, կամ այլ ուղղություն տալու համար: Դա կարող է արվել ամենատարբեր մեթոդներով, որ Լեռնային Ղարաբաղի շուրջը ռազմական իրավիճակի խաղարկումը ամենափորձված եւ անվրեպ տարբերակն է դիտվում: Եւ հետո ակնհայտ է, որ նախկին խորհրդային հանրապետություններն իր վերահսկողության տակ պահող Ռուսաստանը շահագրգռված է այդ երկրներում գործ ունենալ ուժեղ իշխանությամբ օժտված անհատների եւ ոչ թե իրապես ժողովրդավարական վարչակարգերի հետ: Իսկ Հայաստանի նախագահը բազմիցս աղաղակել է, որ իրենից ավելի հարմար կառավարիչ Ռուսաստանն այստեղ հազիվ թե ձեռք բերի: Եթե հաշվի առնենք նաեւ Ռուսաստանում զարգացող ադրոհարիզմի միտումը, ապա ակնհայտ է դառնում, որ Մոսկվան ջանք չի խնայելու Տեր-Պետրոսյանի իշխանությունը պահպանելու, որը հաղթահարելը հայկական ընդդիմության ուժերից առավել քան վեր է:

ՏԻԳՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Գրականություն

ՆԱԽԱՄԱՆՈՐՅԱ ՓԱՐԻԶԸ

Հաված օրեր են մնում մինչեւ Ծննդյան տոները, եւ այդ կապակցությամբ Փարիզում սկսվել են «տիեզերական գիշերները»: Իհարկե, ոչ պետերբուրգյան: Ուղղակի ֆրանսիական մայրաքաղաքի կենտրոնական փողոցները եւ հրապարակները հագել են տոնական զգեստներ, ծաղկել ամանորյա հրավառությամբ:



Ասանձնապես գեղեցիկ են Եյիսեյան դաշտերը եւ նրանց հարող ավենյու Մոնտենը. նրանց ամբողջ երկարությամբ ծառերը, բռնում է, զարդված են լապտերիկներով... Փարիզաբնակ հանրահայտ ընկերությունն աշխատում է հնարել մի ինչ-որ ավելի «աղմկալի», ավելի իմաստալից բան: Այսպես, հայտնի Քրիստիան Դիորի ընկերությունը իր շաբաթ-կենտրոնի ճակատը զարդարել է լամպերով, որը նմանվում է մի մեծ բյուրեղապակե ջահի: կեսգիշերին կարող ես նույնիսկ բերք կարդալ: Դեմ-դիմաց ոչ պակաս հանրահայտ Նինա Ռիչիի ընկերությունը երեւում է ինչպես մի հսկայական դրասանց, չխոսելով մոմերով լուսավորված լուսամուտների մասին: Հարեւան Գեորգ V ավենյուում է նորաձեւության մի ուրիշ տուն՝ «Ժիվենշիին»: Նրա մուտքը եւ լուսամուտները նման են լույսի շատրվաններին: Ավելի գունազարդ եւ շքեղ են դարձել գովազդի տախտակները: Հեսաֆրրասեր անցորդները կլանված դիտում են ցուցափեղկերը: Վերջիններս հաճախ նման են բանգարանային ցուցադրմանը՝ որ շատ հաճախ ամենահայող նորաձեւությունները դառնում են հազվագյուտ ստեղծագործություն, որից իրենց «դարն» են սկսում հազուստի, զարդի, օծանելիքի նվազ հայտնի եւ անհայտ արտադրողները:

Նորաձեւությունը փոփոխական է, ինչպես փոփոխական է ամեն ինչ այս աշխարհում: Օրինակ, այժմ նորաձեւ են քառակուսի կրունկներով կանացի կոշիկները, որոնք լայնանում են ներքեւի մասում ոտնամանը դարձնելով ավելի կայուն: Միգուցե դրանով ցանկանում են ավելացնել իրենց վստահությունն ու կայունությունը նրանք, ովքեր այդ կոշիկները հագնում են:

Հանրահայտ Եյիսեյան դաշտերի կերդարի մեջ նոր աստվոր շիք մտցրեց օրերս բացված «Եվրո Ուոլք դիսնեյ» մասնագիտացված խանութը: Բոլոր տարիքների Միկի Մաուսի, Դոնալդի, Չիպսանուշիկի եւ Յոր բզուկների երկրագուներին այստեղ սպասում են հանդիպումներ իրենց սիրված հերոսների հետ, հուսանվերներ, իսկ մեծ կինոէկրանին կենդանանում են կոմիկսների, դայուսակների, բաժակների եւ կոնֆետների դերասանները:

...Լուսավորված է եւ բռնում է, թե գրատուն օգում ստվարանում է վերջերս վերսիսխված եւ ընդարձակված Լուվրի ճակատը: Նրա հրավառությունը կոմոդյուտերի վրա այնպես է կազմակերպված, որ յուրաքանչյուր հարթաֆանդակը տեսնվի ամենավոր մանրամասնություններով: Պետք է խոստովանել, որ դեսական «Էլեկտրիսիտե դը Ֆրանս» ընկերության ինժեներների աննախադեպ մտահղացումը հաջողվել է: Նոր լուսավորման դրեմիերան զուգադիպեց Լուվրի 200-ամյակին եւ Ռիչելյե նոր թեւի բացմանը բանգարան-դղեսի այն մասի, որտեղ ներեների համար իրադես տոն դարձավ կամերային նվագախմբի վերածված «Բիթլզ» երաժշտության ձայնասկավառակի բոլորվումը:

Հատկապես բազմամարդ են Օսմանի բուլվարները հանրահայտ Մեծ Բուլվարների սկիզբը: Այստեղ հոգ են տարել անցորդների նկատմամբ. մայրի տեղամասը վերեւից տաքացնում են հատուկ ջերմարձակի միջոցով: Փարիզյան խոշորագույն «Պրենտան» եւ «Գալերի Լաֆայետ» հանրախանութների ճակատները վերածվել են մի մեծ տոնածառի, իսկ ցուցափեղկերը դարձել են շարժվող տիկնիկների գործողության բատերաթեմ: Ինչ ասես, որ այստեղ չկա: եւ մեծ արջեր, գեղաձիեր, ամեն տեսակի էկզոտիկ գազաններ, որոնցից ոչ մեկ չի կարողացել հասնել Ֆրանսիայի Ազգային Ժողովի, Ֆրանսիայի արտգործնախարարության շենքերը, Ազգային գրադարանը, փարիզյան կամերցիոն յարատեւ իմիջին մի հաշարձան է: Օրսե թանգարանն ամբ, չնայած գրեթե մեծ հերթ է: Բանն այն է, որ այստեղ կազմակերպված է իմպրեսիոնիստների կտավների «Մեգանից մինչեւ Մասիս» ցուցահանդեսը, որը կազմված է ամերիկյան կոլեկցիոներ Բասնչի հավաքածուից: Ֆրանսիացիներն ասում են, որ նման բան կանոնում մի անգամ է լինում, եւ աշխարհ կանգնում են հերթում այս մեծ հաղթի միակ հերթում:

Իսկական խառնաբոխություն է տիրում փարիզյան խանութներում, յարատեւությունը ցանկանում է ամենուկներ եւ ճկուն Բարբին, որն իր տիկնիկային ողջ գեղեցկությամբ այսպես կասարում է «Աստղիկի կախարդական լապտերը» Դիսնեյի մուլտֆիլմից արեւելյան ղարը: Հիացած երեխաները եւ ոչ պակաս ցնցված ծնողները դիտում են այս բոլորը մի ոգի իրենց զգալով հեքիաթում:

Եւ միայն մեծ հաղթի աղմուկը, ավտոմեքենաների սուլոցը. Փարիզի եռուզեռն են նրանց վերադարձնում հեքիաթից հետո առօրյա...

Առաջվա պես հանդարտ են Համաձայնության հրադարակը Լուվրի լուսավորված կոթողով եւ «Կրիյոն» հարմարավետ հյուրանոցով, եւ Վանդոմի հրադարակը:

Անշուշտ, տարվա բոլոր ժամանակներում, անկախ տոներից, երեկոյան եւ գիշերային Փարիզի ամենագունգված անկյունը եղել եւ մնում է Էյֆելյան աշտարակը: Ֆրանսիական հանճարի այս գլուխգործոցը լուսավորված է առանձնահատուկ կերպով՝ մեղմ լույսը, բռնում է, հոսում է մեսաղյա ժանյակների միջից, եւ ակամա ուզում ես մոտենալ եւ ձեռք մեկնել «ամպերի տավարածին», ինչպես նրան երբեմն անվանել էր Աստղիկը: Ժամանակ առ ժամանակ, աշտարակի տարբեր հարկերում բռնկվում են լուսանկարչական ապարատների կայծերը: Դեմ դիմաց Շայո դղեսն է, որի լուսավորված կիսաշրջանակը «ձայնակցում» է աշտարակին... Տեսարանն իրոք որ տպավորիչ է եւ անմոռաց:

Իսկ կաղարեմոխտագույն Սենայով նավարկող գեղային տրամվայներն իրենց հզոր լուսարձակներով գիշերվա մթությունից խլում են Սենի կիսամուռ ափերը, մոտակա հիշարժան վայրերը: Դրանք Սենի Լոի եւ Սիտե կղզիներն են, Մայր տաճարի վանքը, հնագրավածառների արկղերը, Օրսե, Լուվր, Կոնսերժերի, Ազգային ժողովի, Ֆրանսիայի արտգործնախարարության շենքերը, Ակադեմիան, Ազգասերության արձանը, փարիզյան կամարները յարատեւ իմիջին մի հաշարձան է: Օրսե թանգարանի մոտ, չնայած գրեթե մեծ հերթ է: Բանն այն է, որ այստեղ կազմակերպված է իմպրեսիոնիստների կտավների «Մեգանից մինչեւ Մասիս» ցուցահանդեսը, որը կազմված է ամերիկյան կոլեկցիոներ Բասնչի հավաքածուից: Ֆրանսիացիներն ասում են, որ նման բան կանոնում մի անգամ է լինում, եւ աշխարհ կանգնում են հերթում այս մեծ հաղթի միակ հերթում:

Իսկական խառնաբոխություն է տիրում փարիզյան խանութներում, յարատեւությունը ցանկանում է ամենուրեք փարիզյան նեղլիկ փողոցներից մինչեւ ամենաաշխույժ խաչմերուկներում: Ժամանակի նախանշանն է՝ նույնիսկ այս դեպքերում նրանք անբաժան են իրենց «ռոմանտիզմից» եւ սիրած երաժշտությունից:

... Փարիզը, նախապատրաստվում է Ծննդյան օրվան եւ Նոր տարվա հանդիպմանը:

ՏԻԳՐԱՆ ԼԻՈՆՅԱՆ
Փարիզ

Տեխնոլոգիաներ

Չեխի առեւտրի նոր ուղիներ

Չեխի առեւտուրը շատ երկրների համար դարձել է եկամուտի հիմնական աղբյուր: Այն Չեխոսլովակիայում եւս մեծ զարգացում էր ապրում մինչեւ 1987 թվականը: Այդ տարվա ընթացքում չեխերը 29.3 միլիարդ կրոն արժողությամբ, այսինքն՝ ամբողջ երկրի արդյունաբերական արտադրության մեկ երրորդի չափով զենք էին արտադրել, որի 80 տոկոսը վաճառվել էր արտասահմանում: Զենք արտահանող խոշորագույն երկրների ցուցակում երկիրը գրավում էր յոթերորդ տեղը: Ինչպիսի՞ ազդեցություն են ունեցել քաղաքական հեղաշրջումները այդ ասպարեզի վրա, եւ ի՞նչ նոր հեռանկարներ են բացվում նրա առաջ: The Economist հանդեսի նոյեմբերի 12-ի համարն անդրադառնում է այդ հարցերին:

Չեխոսլովակիան միշտ չէ, որ կարողացել է կատարել զենքի առեւտուր հանուն շահույթի: Մեր դարասկզբի սկզբնական տարիներին նա ստիպված է եղել քաղաքական հանգամանքների բերումով զենք մատակարարել Հաբսբուրգյան, իսկ հետագայում նաեւ նացիստական եւ խորհրդային կայսրություններին: 1989 թվին, Խորհրդային Միության փլուզումից վերջ է դրվում նաեւ այդ երկրի զենքի բարգաված արտադրությանը: Դադարում է գոյություն ունենալուց Վարշավյան ուխտը եւ վերանում նրանում ստեղծված ներքին շուկան: Չեխոսլովակիայի կառավարությունն ստեղծված իրավիճակից ելք որոնելու մտահոգությամբ ստիպված է լինում դիմելու Միջին Արեւելքի երկրներին:

Երկրորդ մեծ հարվածը նրան հասնում է այս տարվա սկզբին, երբ երկիրը բաժանվում է երկու մասի: Չեխիայի եւ Սլովակիայի: Առաջինը «ժառանգում է» ինքնաթիռների, ռադիոների, թեթեւ հրազենի եւ դայթուգիկների արդյունաբերությունը, իսկ երկրորդը բավականին հնացած տանկերի ու ծանր հրազենի արդյունաբերությունը: Երկու երկրում էլ մեծանում նվազում է արտադրությունը. 1988-ի համեմատությամբ համապատասխանաբար 30 եւ 85 տոկոսով: Այժմ մի շարք գործարաններ ու ձեռնարկություններ միավորելու միջոցով փորձ է արվում վերակազմավորել ամբողջ ռազմարդյունաբերական համակարգը: Այս տարվա հունիսին ստեղծվել է Հետազոտությունների, զարգացման եւ արդյունաբերության խումբը (ՀԶԱԽ), որի նպատակն է նոր զարկ տալ զենքի առեւտրին: Խումբը նախագահում է Լյուբոմիր Սուդեկը, որը Շկոդա-Պլզեն կոչվող հսկայական ինժեներական մի ֆիրմայի ղեկավարն է եւ բարենեբերից մեկը: Ֆիրման, որտեղ աշխատում են խանձնկ հազար բանվորներ, արտադրում է համարյա ամեն ինչ, սկսած ծխախոտ դատարանելու սարքերից մինչեւ միջուկային ռեակտորներ: Ընդհանուր առմամբ խմբում ընդգրկված են մոտ 40 ընկերություններ, իրենց 180 հազար բանվորներով: Յուրաքանչյուր անդամ առնվազն հիսուն տոկոսով ղեկավարում է չեխ լինի եւ մեկ միլիոն կրոն ներդնի ընդհանուր մի ֆոնդի, որը ծառայելու է արտադրանքի արտահանումը կազմակերպելու աշխատանքներին:

Խմբի առաջին ծրագիրն է արտադրել այնպիսի բեռնատար ավտոմեքենաներ, որոնք կկարողանան լիովին բավարարել եւ հրթիռաձակիչներ, եւ զենքային հրետանի: Մտադրվում է նաեւ նախկին T-72 տանկերի արդիականացման ծրագիրը, որը չնայած չեխական բանակի համար է նախատեսված, սակայն կարող է գրավել նաեւ օտարների ուշադրությունը, եւ դառնալ դրամաշնորհ ունեցող արտադրանք: Խմբի կողմից դեռեւ է արտադրվի նաեւ թեթեւ հրազեն, որն արտաքին տուկացում վաճառվելու դեպքում մեծ եկամուտ կարող է բերել արտադրողներին:

Դրսում նորանոր տուկաններ հայտնաբերելու մտահոգությամբ էր դարձված արդյունաբերության եւ առեւտրի նախարար Վլադիմիր Դլուհիի հրադարակած արտահանումների նոր կանոնակարգը, որն ավելի «ճկուն» է, քան դարոն Հաբելի նախկին «խիստ» օրենքները: Մինչեւ տարեվերջ սպասվում են նաեւ այլ դրություններ այդ բնագավառում:

Դրսում նորանոր տուկաններ հայտնաբերելու մտադրությամբ էր դարձված արդյունաբերության եւ առեւտրի նախարար Վլադիմիր Դլուհիի հրադարակած արտահանումների նոր կանոնակարգը, որն ավելի «ճկուն» է, քան դարոն Հաբելի նախկին «խիստ» օրենքները: Մինչեւ տարեվերջ սպասվում են նաեւ այլ դրություններ այդ բնագավառում:

Դրսում նորանոր տուկաններ հայտնաբերելու մտադրությամբ էր դարձված արդյունաբերության եւ առեւտրի նախարար Վլադիմիր Դլուհիի հրադարակած արտահանումների նոր կանոնակարգը, որն ավելի «ճկուն» է, քան դարոն Հաբելի նախկին «խիստ» օրենքները: Մինչեւ տարեվերջ սպասվում են նաեւ այլ դրություններ այդ բնագավառում:

Դրսում նորանոր տուկաններ հայտնաբերելու մտադրությամբ էր դարձված արդյունաբերության եւ առեւտրի նախարար Վլադիմիր Դլուհիի հրադարակած արտահանումների նոր կանոնակարգը, որն ավելի «ճկուն» է, քան դարոն Հաբելի նախկին «խիստ» օրենքները: Մինչեւ տարեվերջ սպասվում են նաեւ այլ դրություններ այդ բնագավառում:

Դրսում նորանոր տուկաններ հայտնաբերելու մտադրությամբ էր դարձված արդյունաբերության եւ առեւտրի նախարար Վլադիմիր Դլուհիի հրադարակած արտահանումների նոր կանոնակարգը, որն ավելի «ճկուն» է, քան դարոն Հաբելի նախկին «խիստ» օրենքները: Մինչեւ տարեվերջ սպասվում են նաեւ այլ դրություններ այդ բնագավառում:

ԱՄԱԳԻՐ
ԱԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ԲԱՆԲԵՐ
ակադեմիական
արձակ
պոէզիա
եւ
SUN
SUN
իր պոեզիայով
հանդերձ
ԴԱԼԼԱՔՅԱՆ
ՏԱՌԱՁԵՎԵՐ
OUTLINE FONTS
GARAMOND AND AVANT GARDE LIKE
հոմեր 562863, ԱԶԳ օրաթերթ

digitised by A.R.A.R.@

Լուսանկար

ԱՍՏՂԵՐՆ ԷԼ ԵՆ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆՈՒՄ

Խոսքը Հոլիվուդի եւ ժամանակակից երաժշտության նշանավոր աստղերի մասին է, որոնք մեզ նման մարդիկ են՝ իրենց անհաջողություններով եւ ձախողումներով: Տարբերությունը միայն մեզանից եւ հաստկաղես նրանից, ովքեր ողջ կյանքում իրենց անհաջողակ են համարում, այն է, որ այդ անհաջողություններն ու ճակատագրի հեգնանքները նրանց ոչ թե հիասթափեցնում եւ վհատեցնում, այլ ընդհակառակը, մղում են ինքնակատարելագործման, խթանում հաստատակամորեն դայքարելու նպատակին հասնելու համար: Այդպես են նրանք՝ այդ աստղերը: Վկա՝ ստորեւ ներկայացվող «խոստովանությունները»:



Ջեկ Նիկոլսոն. «Իմ առաջին կինոփորձից հետո բենադրիչն ընկավ մտատանջության մեջ. «Չեմ դատկերացնում, թե դուք ինչի կարող եք դետք գալ: Բայց եթե երբեւէ մենք ձեզ հրավիրենք, կնշանակի, թե մեր գործերն իրականում որքան վատ են»: Այդ ժամանակվանից ես եմ փրկում իմ բենադրիչներին»:

Անժելիկա Հաստոն. «Երբ ես դատրաստվում էի նկարահանվել «Գրիցցի ընտանիքի դատիվը» ֆիլմում, որի բենադրիչը հայրս էր՝ Ջոն Հաստոնը, եւ որտեղ խաղում էր իմ ընկեր Ջեկ Նիկոլսոնը, ինձ իրավունք վերապահեցի գործակալիցս դատանջել նախատեսվածից մեծ գումար: Վերջինս իմ ներկայությամբ զանգահարեց մի մարդու, որը տնօրինում էր կինոնկարի բյուջեն եւ հայտնեց մտադրությունս: Եւ գիտեք՝ նա ինչ դատասխանեց. «Ինչդե՞ս. վճարել ավելի շատ: Սրանցեմ այդ մասին: Իմ կարծիքով նա այդ ֆիլմում ավելորդ է: 15 դերասանուհի հերթի են կանգնած այդ դերի համար. նրան դարզապես վերցրել են հոր, մեկ էլ՝ ընկերոջ դատվիճ»:

Ի՞նչ եք կարծում, լսածից հետո ի՞նչ էր մնում անելու. կամ մեռնել տեղում, կամ էլ դայքարել դատվիճ համար: Ես ընտրեցի երկրորդը եւ փորձեցի առաջարկել, որ ես էլ եմ ինչ-որ բան ներկայացնում: Եւ որոշ ժամանակ անց այդ դերի համար ստացա «Օսկար» մրցանակը:

Մադոննա. «Ուրբաթ դասարանից հետո ինձ արձակուրդի ուղարկեցին տատիկիս տուն՝ Բեյ-սիթի (Միչիգանի նահանգ): Այնտեղ շատ լավ էր: Աղջում էի ֆեռիներիս հետ, որոնք տարիքով ինձանից այնքան էլ մեծ չէին եւ ունեին իրենց ոոխումբը: Նրանց հետ շարունակ փորձեր էի անում: Այդ ամռանն էր, որ առաջին անգամ ջիպս հագա, փորձեցի ծխել, սկսեցի ուսմերս հանել եւ ներկվել: Ինձ ուղղակի զգում էի մեծացած եւ հասունացած: Երբ վերադարձա տուն, խորթ մայրս ասաց, որ ես նման եմ փոքրիկ դոոնկուտու: Դրանից շատ էլ չվիրավորվեցի, որովհետեւ, իրոք, մտքումս հենց դա էր. կիծկալներիս հարց է, թե կարողացե՞լ եմ մինչեւ հիմա ազատվել»:

Լյուկ Պերրի. «Ես սովորում էի բաստեռական դդրոցում եւ Հոլիվուդում փորձում ցանկացած դեր՝ որը տալիս էր վերադարձա տուն, խորթ մայրս ասաց, որ ես նման եմ փոքրիկ դոոնկուտու: Դրանից շատ էլ չվիրավորվեցի, որովհետեւ, իրոք, մտքումս հենց դա էր. կիծկալներիս դատասխանիր: Ստացել եմ ուղիղ 216 մերժում: Սա ճշգրիտ թիվ է, հաշվել եմ: Կարեւորն այն է, որ 217-րդ փորձը, բարեբախտաբար երջանիկը եղավ. ինձ մի աննշան դեր վստահեցին ոչ նշանակալից մի ֆիլմում: Այնդես որ 217 թիվն այժմ ինձ համար ամենաերջանիկն է»:

Դենիսի դը Վիտ. «Փորձում եմ երազել կինոաստղ դառնալ: Երբ դարձա 22 տարեկան, հավաքեցի ունեցածս-չունեցածս եւ ուղեւորվեցի Հոլիվուդ՝ իրագործելու երազանքս»: Թափառում էի մի աստղիայից մյուսը եւ ամենուր մերժումներ ստանում: Ամենից շատ ձգտում էի մոտիկանալ մի կնոջ, որ բենադրիչի օգնականն էր դերատաններ վարձելու գծով: Մի քանի ամիս տեւեցին փորձերս, եւ երբ վերջադես հասա նդատակիս, որդես դատասխան լսեցի. «Նման դաշաշ ոչ մեկին դետք չէ»: Չհավատացի: Հոլիվուդում կարիերա սկսեցի նրանից, որ հսկիչ էի աշխատում շքեղ ռեստորաններին կից ավտոկանգառում, որտեղ հաճախ էին գալիս կինոաստղերը: Ակնջներումս չէին լռում այն կնոջ ասածները, եւ մեջս չարության հետ միասին հաղթելու հսկայական ցանկություն էր առաջանում: Ես ափսոսում եմ, որ այդ կիները չադրեց միչեւ այն օրերը, երբ ինձ այցելեց հաջողությունը: Ընդ որում, ավելի մեծ, քան ես կարող էի երեւակայել»:

Լորեյն Բրակկո. «Երբ սովորում էի վեցերորդ դասարանում, մի անգամ դասընկերներս քվեարկություն անցկացրին եւ ինձ միաձայն համարեցին «ամենաազեղը մեր դդրոցում»: Դա կոտրեց սիրտս: Եկա տուն եւ ողջ երեկո լաց եղա՝ նստած հորս ծնկներին: Առավոտյան դարձյալ դետք էր դդրոց գնալ ու գնացի. թեեւ ոտքերս չէին տանում: Գնացի, որովհետեւ մտքումս ինչ-որ մի տեղ համոզված էի, որ ես շատ գեղեցիկ եմ: Սա ինձ շատ-բան սովորեցրեց, եւ այդ օրվանից երբեք չեմ գնահատում մեկին միանգամից՝ առանց ծանոթ լինելու նրա ներաշխարհին»:

Պատրաստեց
ԼԵՎՈՆ ԼԱՇԻԿՅԱՆԸ

Լուրերի Հոսք

Թեչերը վկայություն է տալիս

Մեծ Բրիտանիայի նախկին վարչադետ Մարգարետ Թեչերը երեկ կանգնեց հարցաքննիչ ատյանի առաջ, վկայելու իր վարչադետության օրոք Իրաքին վաճառված գերարդիական սարքավորումների կադակցությամբ, որը Բաղդադն օգտագործել էր սդառազինվելու համար: Տիկինը ներողություն չխնդրեց այդ առթիվ, ընդունելով հանդերձ, թե իր գլխավորած կառավարությունը թույլ է տվել որոշ սխալներ: Թեչերը բարձրացված հարցը «անկարեւոր» որակեց:

Տիեզերանավորդներն ավարտեցին վերանորոգումը

Ամերիկացի տիեզերանավորդներն անօրինակ դայմաններում ավարտեցին «Հաբըլ» տիեզերական հեռադիտակի վերանորոգության աշխատանքները, ամբողջացնելով «էնդիվըր» տիեզերանավի առաքելությունների շարքը: Այսուհանդերձ, գիտնականները միայն 13 տարբերից կիմանան, թե նոր տեղադրված ոսպնյակները աշխատունա՞կ են, թե ոչ:

Զուտ ռուսական գործարարություն

Ուրալյան Պերմ քաղաքում հայտնվել է բիզնեսի նոր տեսակ: Քաղաքի առավել գործարար բնակիչները «վարձով» բաժակներ են վերցնում հասարակական սննդի մի օբյեկտում եւ հանձնում՝ մյուսում: Բանն այն է, որ ամանեղենի գրավագինը տարբեր կետերում տատանվում է 25-100 ռուբլու սահմաններում:

Սկարֆ

Թաղումները դետականորեն

Համաձայն Սոչիի քաղաքադետարանի կարգադրության, այս տարվա դեկտեմբերի 1-ից մահացած քաղաքացիների թաղման եւ հուղարկավորության ծախսերն իրենց վրա են վերցնում տեղական իշխանությունները: Դետական ծառայությունները վերաբերում են գերեզմանը փորելուն, ինչդես նաեւ դագաղի եւ դրա տեղափոխելու ծախսերին:

Սնարֆ

Էրոտիկան արգելվում է

Համաձայն Կիսլովոդսկ քաղաքի վարչակազմի ընդունած որոշման, քաղաքում արգելված է էրոտիկ գրականության վաճառքը: Տարածման թույլտվություն է տրված միայն երեք կազմակերդությունների եւ միայն այն դայմանով, որ կբացվեն առանձին բաժիններ, որտեղ այդ արտադրանքում կվաճառվի հատուկ փաթեթավորմամբ:

Սնարֆ

Կաշդիրովսկին ընդդեմ Կրասնոդարի

Կրասնոդար քաղաքի Լենինյան շրջանի ժողովրդական դատարանը մերժեց հայտնի էմստրասենս Անատոլի Կաշդիրովսկու հայցի ընդունումը: Վերջինս որոշել էր դիմել դատարան ընդդեմ Կուբանի եւ Եկատերինոդարի արհեստիկոդոս Իսիդորի, որը տեղական թերթում Կաշդիրովսկու սեանսները հայտարարել էր մարդկանց առողջության եւ հոգու համար վնասակար:

Սնարֆ

Ուկրաինայում արգելվել են վարկերը

Համաձայն Ուկրաինայի վարչադետի դաշտոնական տարի եւ ազգային բանկի վարչության նախագահի, հանրադետության կոմերցիոն բանկերին արգելվել է ձեռնարկություններին որեւէ վարկ տրամադրել: Դրա հետեւանքով այսօր ուկրաինական ֆինանսական համակարգը կաթվածահար վիճակում է: Նույն վիճակում են եւ բանկերի հաճախորդները՝ դատրաստի արտադրանքը չի վաճառվում, քանի որ առեւտրական կազմակերդությունները փող չունեն: Մասնագետների կարծիքով, կառավարության կողմից վերջին ժամանակներս ընդունվող միջոցառումները խոսում են այն մասին, որ Ուկրաինան կանգնած է ազգային տարադամի՝ գրիվնայի, ընդունման շեմին:

Սնարֆ

Էջեր

Առաջին անհատականը

Նկարիչ Թադեւոս Տեր-Մեսրոպյանն անծանոթ անուն չէ արվեստասերների շրջանում: Նրա աշխատանքները բազմիցս ցուցադրվել են հանրադետական ցուցահանդեսներում, նաեւ արտասահմանում: Այս մի ցուցահանդեսը, սակայն, որ օրերս բացվեց «Արվեստ» ամսագրի ցուցասրահում, նրա առաջին անհատականն է:

Բացման խոսքով հանդես եկավ «Արվեստ» ամսագրի գլխավոր խմբագիր Գուրգեն Առաքելյանը: Նկարչի գործունեության մասին դատմեցին արվեստաբան Պողոս Հայթայանը, Հայաստանի նկարիչների միության գրաֆիկայի մասնաճյուղի նախագահ Ռոբերտ Սանուկյանը: Նրանք բոլորն էլ նշեցին, որ վերջին 2-3 տարին երիտասարդ արվեստագետը ստեղծագործական մեծ թռիչք է արդում:

Ցուցահանդեսն ամբողջությամբ նվիրված է երկրաչարժի հինգերորդ տարելիցին: Գործերի մեծ մասը կատարված է մեզ համար նոր սերիգրաֆիայի եղանակով: Ինչդես նշեց հանրադետության արվեստի վաստակավոր գործիչ Վաղինակ Այվազյանը, նկարիչը միակն է Հայաստանում, որ աշխատում է նման ոճով: Մեջբերենք կարծիքներից մեկը գրված բնության ադեցի ականատես Նախրայի կողմից. «Դուք, որ ականատես չեք եղել մեծ աղեցին, իրոք կարողացել եք կերտել դրան համարժեք գեղարվեստական ստեղծագործություններ»: Սեւ, սդիտակ եւ կարմիր գույները, որոնցով տոգորված են աշխատանքները, ուժեղացնում են հուզական լարումը»:

Մի քանի խոսք սերիգրաֆիայի շարանակարգության մասին, որը բազմանալ դոլիդրաֆիական միջոց է: 1989-ին Մոսկվայում Ռաուշենբերգի սերիգրաֆիաների ցուցահանդեսը այնդիսի մեծ տդավորություն ունեցավ Թադեւոս Տեր-Մեսրոպյանի վրա, որ նա որոշեց զբաղվել շարանակարգությամբ: Արտահայտման այս կերդը նա օգտագործեց երկրաշարժին նվիրված շարք ստեղծելիս:

Ավելացնենք, որ ցուցահանդեսի հոդակավորն է «Սուրբ Տաքեփել» միությունը (նախագահ Արամի Հովհաննիսյան):

ՆԱՏԱԼԻԱ ՍՍՍԱՐՅԱՆ

Թիֆլիս

Տոհմիկ լուսանկարիչների սերունդը

Անցյալում Թիֆլիսը հարուստ էր լուսանկարիչներով. ամեն քայլափոխի հանդիդում էին լուսանկարչատներ: Իր հանրաճանաչությամբ եւ համբավով առանձնանում էր հաստկաղես Մնջոյանների տոհմը: Նրանց երեւելի նախնին երկարուդային ծառայող Հաջիբաբը, Թիֆլիս էր գաղթել 20-րդ դարի սկզբին, Կարսի մարզից: Վերջինս այս անունն ստացել էր Երուսաղեմ Հիսուս Քրիստոսի գերեզմանին ուխտի գնալու դատճառով:

Հաջիբաբի զավակներից հիշատակության արժանի է Գրիգորը, որը հանրային ճարտարագետ էր: Նա 1930-ական թվականներին, խուսափելով անօրինակ բռնություններից, փախավ ԱՄՆ: Մյուս որդին Մարտիրոսը, հայտնի դերձակ էր եւ զգեստներ էր կարում դերասանների ու դետական գործիչների համար:

Շտաբվալներից երկուսը Արշակը եւ Անդրանիկը, հրաղուրված էին լուսանկարչությամբ: Հենց նրանք էլ հիմք դրեցին ընտանիքի լուսանկարչական ավանդույթներին:

Արշակը մասնագիտական գաղտնիքները սովորեց քաղաքի նշանավոր լուսանկարիչ Սամուիլ Միչենկից: Շնորհալի աշակերտը, յուրացնելով լուսանկարչական գործը, առանձնացավ հորից եւ սկսեց ինքնուրույն զբաղվել իր սիրած մասնագիտությամբ: Իսկ հայրը բնակվում էր Թիֆլիսի Սուրբ Դավիթ լեռան լանջի բաղամասում: Արշակն ադրում էր Պուշկինի փողոցի թիվ 3 տանը, որը նախկինում դատկանում էր գեներալ Ա. Տեր-Ասատուրովին (Տեր-Ասատրյան): Նա իր արհեստանոցը հիմնեց այդ տան ձեղնահարկում, որ լայնը բաժանվում էր տանիքից: Իսկ տան առաջին հարկում ուներ լուսանկարչական խանութ:

1917 թվականի հոկտեմբերյան հեղաշրջման տարիներին գինված ելույթները կողոպտեցին տանը բնակիչն ամառելով եկատերինոդար: Դրանից հետո մայրս ասաց, որ ես նման եմ փոքրիկ դոոնկուտու: Դրանից շատ էլ չվիրավորվեցի, որովհետեւ, իրոք, մտքումս հենց դա էր. կիծկալներիս

Այնուհետեւ, դատի Արշակի տոհմական գործը շարունակեց բոռ Արշակը, որը շրջադատում հայտնի է Արիկ կամ Մնջո Ժորայի տրան անվանումներով: Չնայած նա ավարտեց Պետերբուրգի մեսաղագործական ինստիտուտը եւ ստացավ ճարտարագետ-մեսաղագործի մասնագիտություն, այնուամենայնիվ, գերադասեց լուսանկարչական գործը: Այս օրերին իշխանությունները, ազգայնամոլական մոլուցքով տարված, ամեն կերդ ջանում են խանդել շենքը: Մասնավորադես, այդ ծրագիրն է փայփայում «Գոնիո» ստեղծագործական ֆիրման:

Մեկ-երկու խոսք էլ Հաջիբաբի կրտսեր որդու Անդրանիկի մասին: Նա մեծ անուն հանեց՝ հիմնելով քաղաքի առաջին մանկական արհեստանոցը: Այն կրում էր «Երջանիկ մանկություն» անվանումը եւ գտնվում էր երկրաբան ու մեծահարուստ Ալ. Մելիք-Ազարյանցի դերճաշտ՝ տան մեջ. Օլգինսկայա (այժմ՝ Մ. Կոստավայի) փողոցում (թիվ 3): Նա իր մասնագիտական հմտությունները փոխանցեց իրոջ ամուսնուն՝ նորբայազետցի Հրաչյա Տեր-Գրիգորյանին: Հետաքրքրական փաստ է նաեւ այն, որ վերջինս էլ իր հերթին դասախոսեց եւ սովորեցրեց 23 լուսանկարիչների:

Ողբերգական դատահարն ընդհատեց Անդրանիկի կյանքը: 1978 թվականին շարագործները կողոդուտի նդատակով կտուրից մտան տուն: Դիմադրության փորձ կատարելիս նրանք սդանեցին կնոջը: Իսկ հոգեկան ցնցումից եւ ծանր աղրումներից մահացավ նաեւ ինքը լուսանկարիչը:

ՌՈՒԲԵՆ ՆԱՀԱՏԱԿՅԱՆ

digitised by A.R.A.R.@

Լուրերի հոսք

ԳԱՍՏ-ի գլխավոր տնօրենը ճկունության կոչ է անում

«Վազք ժամանակին հակառակ»՝ սակագների եւ առեւտրի գլխավոր համաձայնագրի (ԳԱՍՏ) գլխավոր տնօրեն Պիտեր Սաթերլենդն այսպես բնութագրեց ԳԱՍՏ-ի ուրուգվայական փուլի շրջանակներում համաշխարհային առեւտրի ազատականացման բազմակողմ բանակցություններում ստեղծված իրավիճակը: Կայացած մամուլի ասուլիսում նա բանակցությունների մասնակից 166 երկրներին կոչ արեց ճկունություն դրսեւորել եւ փոխզիջողական լուծումներ գտնել վիճելի հարցերի առթիվ: Միայն այդպես կարելի է կատարել առաջադրված խնդիրը՝ եզրափակիչ համաձայնագրի նախագծի վրա աշխատանքն ավարտել դեկտեմբերի 15-ին: Ուշադրություն դարձնելով 7 տարի շարունակվող բանակցություններում, անցյալ շաբաթներին նկատված զգալի առաջընթացին, Սաթերլենդը վստահություն հայտնեց, որ մնացած մի քանի օրում կհաջողվի համաձայնեցնել չլուծված խնդիրները: Նրա խոսքերով, փուլի հաջողության համար առանձնակի ղեկավարություն ունեն խոշորագույն առեւտրական գործընկերները, նախ եւ առաջ Միացյալ Նահանգները, Եվրոպական միությունը եւ Ճապոնիան: Թեեւ վերջերս կայացած բրյուսելյան հանդիպման ժամանակ ԱՄՆ եւ Եվրոպական միությունը կարգավորեցին տարաձայնությունների զգալի մասը, մի շարք հարցեր մնում են առկախ: Խոսքը մասնավորապես լսադիտողական հաստվածի եւ մարդասիրական ավիառանպորտի նոպասների մասին է: Ի դեպ, ինչպես նշեց գլխավոր տնօրենը, վիճելի հարցերը կազմում են լուծվածների միայն փոքր մասը: Առաջիկա մի քանի օրում բանակցությունների մասնակիցները պետք է ուշադրությունը բեւեռեն կարեւորագույն ուղղությունների՝ ապրանքների ու ծառայությունների շուկաների, հաստատություններին առնչվող հարցերի եւ առեւտրի կանոնների վրա:

ԱՐՍԵՆՊՐԵՍ ԲՐԱՆԵՍ ՏԱՍՍ

Վրացական գինի թուրքմենական գազի դիմաց

Վրաստանի գինեգործական «Սամտրեսս» միավորման աշխատողներն զբաղված են կարեւոր ղեկավարների կատարմամբ. նրանք իրենց արտադրանքը Թուրքմենստան են առաքում երկնագույն վառելիքի դիմաց: Առաքման համար պատրաստ են 300 հազար շիշ կոնյակ, 10 հազար դեկալիտր գինի, 6 հազար դեկալիտր շամպայն: Դեկտեմբերին կկատարվի փոխանակային գործարքի հիմնական մասը, իսկ մնացած առաքումները կիրակացվեն 1994 թ. առաջին եռամսյակում: Ինչպես հայտնեց տեսչի տնօրեն Մալխազ Փերաձեն, նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետ ղեկավարության կատարումը մեծ դժվարությունների հետ է կապված տարածաշրջանի բաղակայության եւ տեղափոխման բարդությունների պատճառով: Այսպես, Ադրբեջանը երկաթգծի մեկ ճյուղանիկական սեկցիայի շահագործման գինը հասցրել է մեկ միլիոն ռուբլու: Փերաձեի խոսքերով, միջոցներ են ձեռնարկվում կուտակված խնդիրների լուծման նպատակով: Մասնավորապես, Վրաստանի ներկայացուցիչները մեկնել են Ուկրաինա, որտեղ բանակցում են շամպայնի շշեր գնելու շուրջ: ԵՏ

Ուզբեկստանը դեմ է երկխոսությանը

Ելնելով [illegible] Ուզբեկստանի սահմանադրության ընդունման տարեդարձին նվիրված հանդիսություններում, նախագահ Իսլամ Քարիմովը կտրականապես հերքեց հանրապետությունում բնակվող ռուսներին երկխոսություն շնորհելու հնարավորությունը: Հիշեցնենք, որ երկխոսության միտումներն առանձնապես ուժեղացել էին վերջերս կազմված դեկտեմբերի 12-ի ռուսասանյան ընտրությունների հետ: Սնարք

Ա. Ադամյան. «ԱՆԺԽՏԵԼԻ Է ՄԵՐ ՖՈՒՏԲՈԼԻ ՆԱՀԱՆՋԸ»

«Ազգի» հարցաթերթիկին պատասխանում են թիմերի մարզիչները

1. Ինչպե՞ս եք գնահատում մրցաշրջան-93-ը:

2. Ի՞նչ գնահատական կարող եք տալ ձեր թիմի ելույթներին:

3. Ի՞նչ առաջարկություններ եւ ցանկություններ ունեք ՀՀ ֆուտբոլի հայրենական մրցաշրջանի առթիվ:

Մրցաշրջանները բերի, թե անբերի ավարտվում եւ անցնում են պատմության գիրկը: Սիալներից պետք է հետություններ անել եւ սովորել, իսկ լավը պետք է զարգացնել եւ կատարելագործել:

Բայց մի՞թե առաջնության նոպասակը միայն մրցանակակիրներին որոշելն է: Դատեցեք իրերերդ. 2-3-րդ տեղերը որոշվում են վերջին մրցավայրում, առանց խաղի...

Իսկ, եթե չեմպիոնի հարցը որոշվեր վերջին մրցավայրո՞ւմ...

Ի՞նչ գնահատական կարելի է տալ մրցաշրջան-93-ին. երբ ազգային հավաքականը 40-օրյա «մրցուղերթ» է կազմակերպում, այն էլ մրցաշրջանի եռուն պահին. երբ մեր երիտասարդական եւ պատանեկան հավաքականները գրոսաշրջիկության են մեկնում եվրոպայի առաջնություններին, երբ բարձրագույն խմբի 5-6 թիմեր ընդհանրապես ուսումնա-մարզական աշխատանքներ չեն տանում եւ, բնականաբար, նման թիմերի մակարդակը չի կարող բավարար լինել:

Անժխտելի է ֆուտբոլի նահանջը: Այս մասին է պետք առաջին հերթին մտածել. բայց ժամանակներն էլ ֆուտբոլային չեն:

2. Ինչ վերաբերում է մեր թիմին, առա տղաները կարողացան ապացուցել, որ անցյալ տարվա հաջողությունը պատահական չէր: Թիմը մանավանդ երկրորդ շրջանում ավելի վստահ ու նվիրված հանդես եկավ, չնայած, որ հիմնական կազմի երեք ֆուտբոլիստներ (Նիկոլյան, Մկրտչյան, Աղաջանյան) տարբեր պատճառներով չկարողացան հանդես գալ, իրենց տեղը զիջելով երիտասարդներին:

Դժգոհելու ասիք չկա: Տղաները բավականին աճել են եւ գերադասում են լինել միանձնյա արծաթե մեդալակիր, քան «երկվորյակ» չեմպիոն:

3. Առաջարկություններ:

1). Նախօրոք կազմել խաղացանկ, որպեսզի թիմերը կարողանան պլանավորել իրենց աշխատանքները:

2). Կրճատել թիմերի քանակը (10-12 թիմ):

3). Թույլատրել փոխարինելու 3 խաղացողի:

4). Խաղացանկը կազմելիս հաշվի առնել հավաքական թիմերի պլանները:

5). Պահպանել խաղերի կայուն ռիթմը բացառելով երկար բեղմիջումները:

6). Սկզբունքային խաղերը նշանակել նույն օրերին ու ժամերին:

7). Մրցաշրջանն ավարտել մինչեւ հոկտեմբերի 25-ը:

8). Կիրառել ավելի խիստ պատժամիջոցներ ֆուտբոլիստների, մարզիչների ու խաղադաշտերի պատասխանատուների նկատմամբ:

Ցանկություններ.

1). Ցանկանում եմ, որ կյանքը նորմալ հունով ընթանա եւ մարզիչն ու ֆուտբոլիստը մտածեն միայն ֆուտբոլի մասին:

2). Ցանկանում եմ, որ վերջապես կառուցվի Գյումրիի մարզադաշտը, եւ մենք ունենանք կանոնավոր դաշտաններ:

3). Ցանկանում եմ հաջողություն այն թիմերին, որոնք գալիք տարի կմասնակցեն եվրոպական գավաթներին:

Ֆուտբոլում մանրամասներ չկան: ■

1993թ. Հայաստանի 33 լավագույն ֆուտբոլիստները

Դարպասապահներ
1. Աբրահամյան Հարություն («Արարատ»)
2. Նազարյան Գարեգին («Բանանց»)
3. Աբրահամյան Արա (ՀՄՄ-ՖԻՄԱ)

Ազատ պաշտպաններ
1. Հովսեփյան Սարգիս (ՀՄՀՄ)
2. Կարապետյան Սարգիս («Շիրակ»)
3. Խաչատրյան Էրիկ («Ցեմենտ»)

Կենտրոնական պաշտպաններ
1. Վարդանյան Հարություն («Շիրակ»)
2. Սկոյան Հակոբ («Արարատ»)
3. Արզումանյան Վահան («Բանանց»)

Աջ պաշտպաններ
1. Գասպարյան Տիգրան («Արարատ»)
2. Գալստյան Արմեն (ՀՄՀՄ)
3. Իսրայելյան Վարդան («Բանանց»)

Ձախ պաշտպաններ
1. Ստեփանյան Լեւոն («Արարատ»)
2. Ասոյան Արթուր (ՀՄՀՄ)
3. Արտոյան Հակոբ («Շիրակ»)

Աջ կիսապաշտպաններ
1. Գրիգորյան Ռազմիկ («Արարատ»)
2. Մխիթարյան Համլետ («Արարատ»)
3. Կոստանդյան Սամվել («Բանանց»)

Կենտրոնական կիսապաշտպաններ
1. Տոնոյան Արամայիս («Արարատ»)
2. Պետրոսյան Արթուր («Շիրակ»)
3. Նիգոյան Արա («Բանանց»)

Ձախ կիսապաշտպաններ
1. Թահմազյան Հովհաննես («Շիրակ»)
2. Միքայելյան Կարեն («Բանանց»)
3. Սինապյան Վարդան (ՀՄՀՄ)

Առաջային կիսապաշտպաններ
1. Խաչմանյան Աբրահամ («Շիրակ»)
2. Գյուլբուդաղյանց Արմեն («Բանանց»)
3. Հովհաննիսյան Տիգրան («Ցեմենտ»)

Աջ հարձակվողներ
1. Շահգելդյան Արմեն («Արարատ»)
2. Եվդոկիմով Արա («Վան»)
3. Ավետիսյան Արսեն (ՀՄՀՄ)

Ձախ հարձակվողներ
1. Հովսեփյան Անդրանիկ («Բանանց»)
2. Հովհաննիսյան Գեղամ (ՀՄՀՄ)
3. Ավետիսյան Հայկա («Շիրակ»)

Միանգամայն տրամաբանական է, որ ընտրյալների գերակշռող մասը (8 խոսքն) չեմպիոն թիմի «Արարատի» ներկայացուցիչներն են, որոնցից 6-ը նշվել են 1-ին համարի տակ (Հարություն Աբրահամյան, Տիգրան Գասպարյան, Լեւոն Ստեփանյան, Ռազմիկ Գրիգորյան, Արամայիս Տոնոյան, Արմեն Շահգելդյան): 33 լավագույնների ցուցակում 8 ներկայացուցիչ ունի նաեւ «Բանանցը», սակայն միայն Անդրանիկ Հովսեփյանն է նշվել 1-ին համարի տակ: 7 խաղացող «Շիրակից» են, որոնցից 3-ը Հարություն Վարդանյանը, Հովհաննես Թահմազյանը եւ Աբրահամ Խաչմանյանն իրենց դիրքերում լավագույններն են: 6 ներկայացուցիչ ունի ՀՄՀՄ-ն (Սարգիս Հովսեփյանը 1-ին տեղում), երկուսը «Ցեմենտը» եւ մեկական ՀՄՄ-ՖԻՄԱ-ն ու «Վանը»: 33 լավագույն խաղացողների ընտրությունն էլ վկայում է, որ ամենաառաջադիմյալ ֆուտբոլիստները 4 առաջատար թիմերից են: ■

Ռոտվեցին մրցավայրերը

Ազատ ըմբշամարտի եվրոպայի հերթական առաջնությունը 1994 թ. ապրիլի 6-10-ն անցկացվելու է Հռոմում: Իսկ աշխարհամասի հունահռոմեական մրցաշարը 1994 թ. ապրիլի 13-18-ը տեղի կունենա Աթենքում:

Ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնությունն օգոստոսի 15-22-ը կայանալու է Անկարայում, իսկ հունահռոմեականը՝ 1994 թ. սեպտեմբերի 9-13-ը՝ Տամպերեում (Ֆինլանդիա): ■

Կասարինա Վիսսը հետաքրքրվում էր

Հանրահայտ գեղասահորդուհի Կասարինա Վիսսն իր մասին գրված գրքում հայտնում է այն մասին, որ այդ երկրի գաղտնի ոստիկանությունը «Շտազիի» անընդհատ հետեւում էր իրեն, ընդհուպ մինչեւ կյանքի բոլոր մանրամասները եւ մեծ անհանգստության պատճառում: Կասարինա Վիսսը նշում է, որ «Շտազիի» աշխատակիցները գիտեին նույնիսկ իր սիրաբանությունների մանրամասնությունները եւ արձանագրում էին ամեն ինչ: ■

Մակարդակը միայն դրամով չի պայմանավորված

Մեծ բենիսի Անգլիայի ֆեդերացիան աշխարհի ամենահարուստներից է, որը տարեկան 50 միլիոն ֆունտ ստեռլինգի եկամուտ է ունենում: Նման հաջողություն ստիպում է ֆեդերացիային 4-ով բազմապատկել բենիսի խաղադաշտերի թիվն Անգլիայում:

Եւ հիմա ուժեղ բախվով նոր կառույցներ են գնում: Բայց, անկախ եկամուտներից, Անգլիայի բենիսի մակարդակը մնում է ցածր: Այս երկրի ուժեղագույն երկու բենիսիստները զրավում են ԱՏՊ-ի ընդհանուր դասակարգման 84 եւ 90-րդ տեղերը: ■

Նորաձեւությունների զոհ

Ամերիկայի Միացյալ Նահանգների երիտասարդներն անընդհատ ձգտում են նորությունների եւ նորանոր մարզաձեւեր են փնտրում՝ գոհացնելու իրենց ցանկությունները: Այսպես, ամերիկացի մի խումբ մարզիկներ բարձրանում են բենների կամ հեռուստաաշտարակների տանիքները եւ պարաշյուտով թռիչքներ կատարում:

Վերջերս Ալֆ Հյուրեյը, որը 20 տարի զբաղվում է այս տարօրինակ մարզաձեւով, Կոլորադո նահանգի երի քաղաքում 300 մ բարձրություն ունեցող հեռուստաաշտարակից վտանգ պարաշյուտով ցատկել: Ցավոք, անորոշ պատճառներով նրա պարաշյուտը չբացվեց եւ Հյուրեյը գլորվեց ներքեւ: Բարեբախտաբար, թե դժբախտաբար, Հյուրեյը չի մահացել: Բայց նրա ողնաշարն է ջարդվել, եւ նա հավիտյան կզամվի սահնակալին կամ արոռին:

ԳՐԻԳՈՐ ԱՍՏՐՈՅԱՆ
Վալանս, Ֆրանսիա

Աշխարհի գավաթ-94

Ներկայացնում ենք մասնակիցներին

ԳԵՐՄԱՆԻԱ



Աշխարհի չեմպիոն
Տարածությունը՝ 357000 քառ. կմ
Բնակչությունը՝ 79500000
Մայրաքաղաքը՝ Բեռլին
Ֆեդերացիան հիմնադրվել է 1900 թ.
Միջազգային ֆեդերացիայի անդամ է 1904 թ.
Ֆուտբոլով զբաղվում են 5305700 մարդ:
Ակումբների թիվը՝ 27049
Աշխարհի առաջնություններին մասնակցել է 12 անգամ (68 խաղ, 39 հաղթանակ, 15 ոչ-ոքի, 14 պարտություն, գոլակները՝ 145-90):
Աշխարհի եռակի չեմպիոն (1954, 1974, 1990): 1994 թ. աշխարհի առաջնության ընտրական խաղերից ազատված էր որպես աշխարհի չեմպիոն:

Հավաքականի ավագ մարզիչն է Հանս-Հուբերտ Ֆոգտսը:

Հավաքականի կազմը.

դարպասապահներ՝
Իլգներ, Քյոպկե

պաշտպաններ՝
Բուխվալդ, Հելմեր, Քյոհլեր, Մաթեուս

կիսապաշտպաններ՝
Բրեմե, Էֆֆենբերգ, Գուդին, Սյոլեր, Բեյն, Ցորկ, Շուլց, Հեսլեր, Զամմեր

հարձակվողներ՝
Դոլլ, Ցեգե, Ռիդլե, Քլինսման, Հոլեր, Քրուսեն, Թոմ: ■

Վան Բաստենը մահոգ է

Հոլանդիայի հավաքականի եւ Իտալիայի «Միլան» թիմի հարձակվող, աշխարհի անցյալ տարվա լավագույն ֆուտբոլիստ Մարկո Վան Բաստենը հունիսի 9-ին ստացած ծանր վնասվածքից հետո մինչեւ հիմա տառապում է: Չնայած անվանի ֆուտբոլիստը վիրահատության է ենթարկվել, սակայն նրա վերադարձն, ըստ հոլանդական «Ստորի» թերթի համեմատության դեռեւս, մոտ ապագայում խիստ կասկածելի է: Վան Բաստենը, որ երազում էր իր երկրի հավաքականի կազմում մասնակցել 1994 թ. աշխարհի առաջնությանը, հնարավոր է, որ չմեկնի ԱՄՆ: Հուսահատված ֆուտբոլիստը վերջերս հայտնվել է լինում Ամստերդամի տարաններից մեկում, որտեղ տարվում է ոգելից խմիչքներով: Վան Բաստենը նույնիսկ հայտարարել է իր ընկերոջ Ռոնալդ Կումանին, որ հավանաբար հեռանա ֆուտբոլից: ■

Բանվոր կարում է ԱՍՏՐՈՅԱՆ ԲԱՅՐԱՄՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Մեկնաբանություն

ԱՄՆ դեսպանությունը հերքում է, սակայն ի՞նչ է ասում «Հայաստանի Հանրապետությունը»

Այո, Հայաստանում Մ. Նահանգների դեսպանությունը եւ անձամբ մայոր կցորդ Դեյվիդ Սիֆկինը հերքում է, «Ազգը» 3 անգամ արձագանքում է այդ հերքմանը, Նոյյան տապան գործակալությունը նույնպես, սակայն ի՞նչ է հերքում «Հայաստանի Հանրապետությունն» պաշտոնաթերթը, դժվար է հասկանալ:

Ընթերցողներին հայտնի է մեր թերթի էջերում թուրքական մամուլից եւ բրիտանական «Օբսերվեր» թերթից քաղված տեղեկություններն այն մասին, թե իբր, ամերիկյան զինվորականները մարզում են ադրբեջանական բանակը, տեղեկություն, որին միշտ էլ մեր կողմից հերքել էր Հայաստանում ամերիկյան դեսպանության հերքման մասին վկայությունը: Վերջինը դրանցից «Ազգի» դեկտեմբերի 9-ի համարում «Ամերիկյան զինվորականներ Ադրբեջանում» չակերտավոր վերնագիրն էր, որի նյութը քաղել էինք թուրքական «Հյուրրիյեթ» թերթի նոյեմբերի 26-ի համարից, որտեղ այդ մասին ոնդում էր նույն ինքը՝ թերթի պատասխանատու խմբագիր Էրքուդրուլ Օզքյոքը: Իր հերթին, լրատվական գործակալության իր պարտականությունը կատարելով, այդ մասին մամլո կցորդ Սիֆկինի հերքմանը դեկտեմբերի 9-ին արձագանք էր հանդիսացել Նոյյան տապանը, որ միաժամանակ հարց էր տվել կցորդին նախորդ օրը «Գոլոս Արմենիի» թերթում «Հայլուր» լրատվական վերլուծական կենտրոնի կողմից Սնարֆ գործակալությանը տրված այն տեղեկության մասին, թե իբր «Թուրքիան պատրաստվում է Նախիջեւանի տարածքից ռմբակոծել Հայաստանը», որին նույնպես հետեւել էր Դեյվիդ Սիֆկինի հերքումը:

Սակայն չգիտես լրատվական պարկեշտության ո՞ր չափանիշներից ելնելով, «Հայաստանի Հանրապետությունն» պաշտոնաթերթն իր երեկվա համարում խեղաթյուրել էր Նոյյան տապանի հաղորդագրությունը (որի մեկ օրինակն ստացել էինք նաեւ մենք) եւ մեր թերթին վերագրել երկու տեղեկություններն էլ, այսինքն՝ ե՛ւ «Հյուրրիյեթից» քաղածը, ե՛ւ «Գոլոս Արմենիում» լույս տեսածը: Ըստ երեւույթին, «Հայաստանի Հանրապետությունն» թերթի խմբագրությանը շատ էր դուր եկել ամերիկացի կցորդի եզրակացությունը Սնարֆի միջոցով «Գոլոս Արմենիի» թերթի հրապարակածի մասին, թե «Ամերիկայում այսպիսի չստուգված տեղեկություններ տալու համար լրագրողն անմիջապես կհեռացվեր աշխատանքից»:

Ամեն թերթ իր չափանիշներն ունի իրականությունը ներկայացնելու: Սակայն ոչ մի չափանիշի չի համապատասխանում «ՀՀ»-ի կողմից լրատվական ծառայությունից օգտվելու կերպը:

Գուցե այս մասին խոսք ունի ասելու նաեւ Նոյյան տապանը, որը խեղաթյուրման զոհ է գնացել մեր պետական պաշտոնաթերթի կողմից: Սպասում ենք:

«Ազգ»

Դատաբեղանց

ԱԴՐԲԵՋԱՆՆ ԻՐ ՁԻՆԱՎԱՇՈՒԹՅԱՄԲ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ Է ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ամերիկայի Հայկական համագումարը դիմել է ԱՄՆ-ի Զենքերի հսկողության եւ զինսպասման գործակալությանը (ACADA) ճշտելու Ադրբեջանի բանակի զինտեխնիկայի թվակազմը: Գործակալությունը, խորհրդակցելով Եվրոպայում ցամաքային զորքերի վերաբերյալ համաձայնագրի կատարման դիտաստանատու կոմիտեի (CFE) հետ, ներկայացրել է ադրբեջանական բանակի հաշվեկշռում գտնվող զինտեխնիկայի թվակազմը: Ըստ այդ տվյալների, Ադրբեջանը ստացել է Ռուսաստանից հետեւյալ քանակությամբ զինտեխնիկա. 286 տանկ, 388 հրետանային կայանք, 947 զրահամեքենա, 53 ինքնաթիռ, 8 ուղղաթիռ: Ադրբեջանը նաեւ ստացել է Ուկրաինայից 50 տանկ:

Եվրոպայում ցամաքային ուժերի վերաբերյալ համաձայնագիրը ստորագրվել է 1990 թ. նոյեմբերին, սակայն այն սկսվել է կիրառվել 1992 թ. հուլիսից: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, նորանկախ պետություններ 1992 թ. մայիսի 15-ին Տաշքենդում ստորագրել են պայմանագիր Եվրոպայում ցամաքային զորքերի վերաբերյալ համաձայնագրի հիմունքներով: Այդ պայմանագրով Ադրբեջանին թույլատրված էր ունենալ.

220 տանկ, 285 հրետանային կայանք, 220 զրահամեքենա, 50 ուղղաթիռ, 100 ռազմական ինքնաթիռ:

Վերոհիշյալ տվյալների համեմատությունը ցույց է տալիս, որ ներկայումս Ադրբեջանը գերազանցում է սահմանված լիմիտները 116 տանկով, 103 հրետանային կայանքով եւ 727 զրահամեքենաներով՝ կոպտորեն խախտելով տաշքենդյան պայմանագիրը:

Ռուս նավաստին ակամա դարձավ ադրբեջանական զինվոր

«Բաքու հասնելուս պես երկաթուղային կայարանում ինձ բռնեցին եւ մեղադրեցին, թե հայկական լրտես եմ: Չնայելով ռուսական անձնագիրս, բռնությամբ ուղարկեցին դարաբաղյան ճակատ», վերջերս Լեռնային Ղարաբաղում եղած միջազգային մարդասիրական խմբի անդամներին պատմեց ռուս ռազմագերի Ֆիլիպենկոն: Այդ մասին հայտնի դարձավ Լոնդոնի լավատեղյակ աղբյուրներից:

Ֆիլիպենկոն նաեւ պատմեց, որ նախկին ձերբակալվելն ինքը Վլադիվոստոկում նավաստի է եղել եւ Բաքու է եկել ադրբեջանցի ընկերոջ բախանձագին խնդրանքով, որպեսզի նամակ հանձնի նրա ծնողներին: Ռուս ռազմագերու խոսքերով, իր ադրբեջանցի ընկերը խնդրանքը պատճառաբանել է այն բանով, թե իբր չի համարձակվում հայրենիք վերադառնալ, որը պատերազմում է Ղարաբաղի դեմ:

Այսպիսով, Ֆիլիպենկոն ակամա դարձավ ադրբեջանական բանակի մարտիկ եւ օգոստոսի 5-ին գերի ընկավ:

Լոնդոնյան աղբյուրի հաղորդման համաձայն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունները ռազմագերուն ազատ են արձակելու պատերազմի ավարտից անմիջապես հետո:

Սնարֆ

Երեւան

Հացադուլ, ինչո՞ւ

Դեկտեմբերի 10-ին Երեւանում 24-ժամյա հացադուլ հայտարարեցին տեղական «Ավրորա» թերթի խմբագիրը եւ նրա տեղակալը: Թերթի խմբագիր, բանաստեղծության դոկտոր Վլադիմիր Գրիգորյանն խոսքերով, Հայաստանն այժմ գտնվում է մարդու իրավունքների ծայրահեղ ճնշման պայմաններում եւ Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ ձեռնարկված այդ քայլի նպատակն է հենց հանրության ուշադրությունը բերել Հայաստանում իշխանության բոլոր մակարդակներով անձի իրավունքների ոտնահարման վրա: Ինչպես հայտնեց Գրիգորյանը, հացադուլավորներն իրենց իրավունք են վերապահում շարունակելու այն:

Տպագրելով Սնարֆ գործակալության տարածած այս լուրը, ուզում ենք ընթերցողի ուշադրությունը հրավիրել որոշ հանգամանքների վրա: Նախ՝ անշուշտ որ անհասկ. քաղաքացու իրավունքները ոտնահարված են Հայաստանում. մեր լուսավորյալ, ջերմագույն ու անկեղծագույն հայրենակիցների վիճակը վկայություն է դրա: Սակայն, եթե լուրը հաշվարկված է Լրհնուտի համար, պետք է պարզություն մտցնել. մեր կարծիքով, Հայաստանի քաղաքացիների նեղիկա ողբալի վիճակը հետեւանք է ամենից առաջ խորհրդային կայարության քայքայման, որի վրա ժամանակին շատ ճիգ են թափել իրենք՝ այսօրվա սիմվոլները. այն է թե՝ ժամանակի իրավապաշտպանները, այնուհետեւ տնտեսական բոլոր կապերի փլուզման եւ տնտեսության զրերն ամբողջական քայքայման, որը հատուկ է նախկին խորհրդային հանրապետություններին, գումարած դրան շրջափակումը եւ պատերազմը: Առավել անաչառ լինելու համար պետք է ավելացնել նաեւ իշխանությունների առանձին օղակների անչնորհաս գործունեությունը: «Ազգ»

Ի գիտություն Երեւան քաղաքի բնակչությանը

«Երեւանցաց» ՀԿՊՀ տեղեկացնում է, որ այսուհետեւ բնակչության էլեկտրամատակարարումը կկատարվի խստագույնս պահպանելով սահմանված ռեժիմը: Խնդրվում է բնակչությանը զերծ մնալ բաղնան կամ հատանքի առիթով լրացուցիչ էլեկտրամատակարարման խնդրանքով դիմելուց:

էլեկտրամատակարարման մասին տեղեկություն ստանալու, ինչպես նաեւ բողոքները գրանցելու նպատակով կարող եք զանգահարել Երեւանցաց ՀԿՊՀ-ի կենտրոնական եւ համապատասխան շրջանային ցանցերի դիսպետչերական ծառայությունները հետեւյալ հեռախոսահամարներով

կենտրոնական դիսպետչերական ծառայություն 59-27-79 59-25-27 52-89-80

Շենգավիթի շրջան 44-16-42

Էրեբունու շրջան 44-13-22 56-74-82

Մասսոցի շրջան 35-02-00 77-04-01 35-21-52

Սարբիրի շրջան 25-08-83 25-09-91 25-06-73 25-51-93

Շահումյանի շրջան 77-05-53 77-01-01 77-01-03

Խորհրդային շրջան 63-75-19 64-19-10, 64-20-98

Զեյթուն քաղաքաս 28-15-36, 24-41-50

Կենտրոնական շրջան (Սպանդարյան, Մյասնիկյան, Էրեբունու շրջանի մի հատված, Խորհրդային շրջանի մի հատվածը) 52-64-10, 52-64-72, 52-03-79

ՀԲԸՄ AGBU SEASON SPONSOR

Երեւանի սիմֆոնիկ նվագախումբը հայտարարում է մրցույթ թափուր տեղերի համար

ՋՈՒԹԱԿ	6 տեղ
ԱԼՏ	3 տեղ
ԹԱՎՋՈՒԹԱԿ	2 տեղ
ԿՈՆՏՐԱԲԱՍ	2 տեղ

Մրցույթը տեղի կունենա 1993 թ. դեկտեմբերի 25-ին, ժ. 10-ից: Դիմումները ընդունվում են մինչեւ դեկտեմբերի 22-ը:

ՀՖՆ-ի գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ

Լուրեր Հոսքից

Եվրոպան բացում է գիրկը Ռուսաստանի առաջ

Բրյուսելում Ռուսաստանի եւ Եվրոպական միության միջեւ կայացած հանձնաժողովները շատ բարձր գնահատականների արժանացրեցին ստորագրող կողմերը: Եվրոպական հանձնաժողովի նախագահ Ժակ Դելորը նշեց, որ հայտարարագիրը «վճռական աջակցություն է արտահայտում Ռուսաստանում ընթացող բարեփոխումներին»: Փաստաթղթում շեշտված է ՌԴ-ի եւ ԵՄ-ի միջեւ տնտեսական փոխհարաբերությունների «որակապես նոր հիմքի ստեղծման անհրաժեշտությունը»: Ռուսաստանի արտգործնախարար Կոզիրեւի կարծիքով, հայտարարագրի հիման վրա պատրաստվող համաձայնագիրը նոր հուսներ է բացում եւ այն նախատեսված է տարիների համար: Նա հայտարարեց, որ «համաձայնագիրը ռուսական արդյունաբերությունը, արտահանումը, աշխատուժի եւ կապիտալի շարժումը բարձրացնում է որակապես նոր մակարդակի, որն առաջ չէինք էլ երազել»: Միեւնույն ժամանակ Կոզիրեւը նշեց, որ վեճերի առարկա է միայն միջուկային նյութերի արտահանման հարցը, այն էլ միայն մի երկիր առարկություններ ունեն: Իսկ նախագահ Ելցինի կարծիքով համաձայնագիրը վերացնում է Ռուսաստանի հանդեպ խտրականությունը, ինչը սաաը պատերազմի ավարտի եւս մի վկայություն է: Ելցինը նշեց, որ համաձայնագիրը կօժանդակի Ռուսաստանի եւ Եվրոպիայի համագործակցության զարգացմանը ԱՄՆ-ի ու Ճապոնիայի հետ: Միեւնույն ժամանակ, ժակ Դելորի կարծիքով, «Ինչպես Եվրոպիությունն ունի Ռուսաստանի կարիքը, այնպես էլ Եվրոպիությունն է անհրաժեշտ Ռուսաստանին»: Իսկ «Ելցինը նոր Ռուսաստանի մարմնավորումն է», հայտարարեց նա: «Ազգ»

Պակիստանը նույնպես նախաձեռնություն է հանդես բերում

Պաշտոնական նորությունը այցով դեկտեմբերի 8-ին թեհրան ժամանեց Պակիստանի վարչապետ Բենազիր Բհուտոն: Այցի նպատակը երկու երկրների միջեւ երկկողմ հարաբերությունների ամրապնդման հնարկումն էր: Նշվեց Տաջիկստանում եւ Աֆղանստանում խաղաղություն հաստատելու Պակիստանի շահագրգռվածությունը: Բհուտոն առաջարկեց համագործակցություն ադրբեջանցի փախստականներին օգնություն ցույց տալու գործում, ինչպես նաեւ հայտարարեց, թե Իրանն ու Պակիստանը «պետք է համակարգեն իրենց ջանքերը Ադրբեջանի նկատմամբ Հայաստանի ագրեսիան դադարեցնելու համատեղ ռազմավարություն մշակելու համար»:

Սինհուա

Չեչենները պատերազմ կսկսեն

Չեչենական Հանրապետության տեղեկատվության եւ մամուլի դեպարտամենտի ղեկավար Մովլադի Ուդուգովը հայտարարեց, որ եթե ռուսական բանակը ներխուժի Չեչնիա, ապա չեչեն ժողովուրդը ցույց կտա դիմադրություն եւ պարտիզանական պատերազմ կհայտարարի: Նա նշեց նաեւ, որ ինքը ներկայացնում է կառավարության պաշտոնական տեսակետը: Ուդուգովը հայտնեց, որ դեկտեմբերի 9-ին կայացել է Դուդայեւի հանդիպումը չեչենական բանակի հրամանատարության հետ, որտեղ քննարկվել է հանրապետության երկաթգիծը հսկողության տակ առնելու ելցինի հրամանագիրը: Ռուսաստանի նախագահն այս քայլը պատճառաբանել է Չեչնիայի տարածքում երկաթուղային շարժակազմերի թալանով: Չեչենական Հանրապետության ղեկավարությունը Ռուսաստանի նման քայլը գնահատել է որպես «պատերազմի հայտարարման հողարկված ձեւ»: Նշանակ[illegible] են, որ Չեչնիայում շարժակազմերի թալանները 10-15 անգամ զիջում են Ռուսաստանում եղած մակարդակին: Ուդուգովի տեղեկություններով, Չեչնիայի սահմանի մոտ են տեղակայված 250 հազար ռուսական զինվոր եւ 1000 տանկ, որոնք «պատրաստ են ներխուժել Չեչնիա»: «Մենք բավականաչափ զինտեխնիկա ունենք ագրեսիան զսպելու համար, ամեն չեչենական ընտանիքում զենք կա», հայտարարեց Ուդուգովը: ԼՏ

ՊԵՏՐՈՍՅԱՆ & Կ°

ԲԱԺԱՆՑԵՆ ՕԵՐՕԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ընդունվում են ավանդներ հետեւյալ պայմաններով

1 տարով 320 %

8 ամսով 180 %

4 ամսով 80 %

Բարձր տոկոսներ եւ հուսալիություն:

Մեր հասցեն՝ Մարշալ Բաղրամյան պող., 17 տուն:

Հեռ. 56-35-99

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վանաձորում են նորմալ լուսավորման լամպեր:

Հասցեն՝ Երեւան, Գվարդիականների 21:

Տեղեկությունների համար կարելի է զանգահարել 23-41-76 հեռախոսահամարով:

Ժամը 18:00-ից հետո:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ամենացածր գներով առաջարկվում են կոշտ տուփերով RICHMAN, MALIMBO, DUNSTON բարձրորակ ամերիկյան ծխախոտների մեծածախ խանութներ

Հեռ. 52-27-55

ՀՀ կառավարության «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան 23 Աբովյանյան 2 Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Տիրաժ 25 000. Պատվեր 1653 Ստորագրված է տպագրության՝ 10.12.1993

digitised by A.R.A.R.@